

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՏԱՏՈՒՄ ԵՄ.

ՀՀ կրթության և գիտության

նախարար՝

Ա.Աշոտյան

«___» _____ 2009թ.

ՀՀ պետ. գրանցման թ. _____

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

Մասնագիտությունը՝ 311112 - «Ազրոպարենային համակարգի ֆինանսների
դասիչ, անվանում

կառավարում»

Որակավորումը՝ տնտեսագիտության բակալավր
անվանում

Ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից

Երևան 2009

**311112 - «ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՍՆԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»**

դասիչ, մասնագիտության անվանում

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**1.1. 311112 - «Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում»
մասնագիտությունը**

դասիչ, մասնագիտության անվանում

հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. օգոստոսի 30-ի թ. 1038-Ն որոշմամբ:

1.2. Շրջանավարտի որակավորումը՝ տնտեսագիտության բակալավր

որակավորման աստիճան

311112 - «Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում» մասնագիտությամբ

դասիչ, մասնագիտության անվանում

տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման

որակավորման աստիճան

նորմատիվային ժամկետը 4 տարի 8 ամիս է:

1.3. Շրջանավարտի որակավորման բնութագիրը

311112 - «Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում» մասնագիտությունը տնտեսագիտության բակալավրին տալիս է մասնագիտական գիտելիքների համալիր հետևյալ բնագավառներում՝ պետական և ոչ պետական ֆինանսների, բանկային և ոչ բանկային ոլորտի, բորսային և ագրոպարենային համակարգի ապահովագրական գործի, ներդրումային և դրամաշրջանառության քաղաքականության, ֆինանսական մենեջմենթի, մարքեթինգի, ֆինանսական վերլուծության, արժեթղթերի շուկայի, հարկերի և հարկման, վիճակագրության, ֆինանսական հաշվառման և հաշվետվությունների կազմման:

Ուսումնառության ընթացքում ուսանողն ուսումնասիրում է տարբեր մակարդակների բյուջեների ձևավորման և կատարման գործընթացները; պետական պարտքի կառավարման մեխանիզմը; արտաբյուջետային հիմնադրամների գործառնությունները; ձեռնարկություններում, կազմակերպություններում, հիմնարկություններում հաշվառման և հաշվետվության կազմման կարգը; դրամական հոսքերի և տնտեսավարող սուբյեկտների ներդրումային գործունեության կազմակերպումը և կառավարումը; ինչպես նաև բանկերի և ֆինանսական այլ միջնորդների, այդ թվում նաև՝ ապահովագրական կազմակերպությունների ֆինանսների կազմակերպման առանձնահատկությունները:

1.3.1. Բակալավրի տեղը ընտրած բնագավառում և գործունեության ոլորտները.

311112 - «Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում» մասնագիտության գծով բակալավրի մասնագիտական գործունեությունն իրականացվում է տնտեսության տարբեր ոլորտներում և ծառայում է բյուջետային ու արտաբյուջետային ինստիտուցիոնալ կառուցվածքների, սեփականության տարբեր իրավական ձևեր ունեցող տնտեսավարող սուբյեկտների գործառնությունների մասնագիտական սպասարկմանը: Նա պետք է պատրաստ լինի աշխատելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տարբեր մակարդակների ֆինանսատնտեսական ծառայություններում, բանկերում և դրամավարկային, ներդրումային և ապահովագրական կազմակերպություններում, կազմակերպատիրավական բոլոր ձևերի տնտեսավարող սուբյեկտների, այդ թվում նաև ագրոպարենային ոլորտի տնտեսագիտական ծառայություններում: Նա պետք է ապահովի սոցիալ-տնտեսական տվյալների ձևավորումը, վերլուծությունը և ա-

ռաջարկություններ ներկայացնի ակտիվների, պարտավորությունների, կապիտալի, դրամական հոսքերի շարժի, եկամուտների և ծախսերի, ինչպես նաև կազմակերպությունների ֆինանսական գործունեության արդյունքների մասին տեղեկատվության կառավարման համար: Նա պետք է տիրապետի գիտելիքների՝ ֆինանսական և բանկային մեներջման, մարքեթինգի, հաշվառման և հաշվետվության, խորհրդատվական-փորձագիտական, վերահսկման-վերստուգման գործունեություն ծավալելու համար: Նա պետք է տիրապետի տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ներուժի օգտագործման բարելավմանը, դրանց ֆինանսատնտեսական հարաբերությունների նպատակահարմար կազմակերպմանը, աջակցի իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականության և տնտեսական շահերի պաշտպանությանը:

Բակալավրի մասնագիտական գործունեության ոլորտներն են՝
ՀՀ պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսատնտեսագիտական ստորաբաժանումները, սեփականաշնորհման և հարկային ծառայությունները, բանկերը, ոչ բանկային ու ներդրումային կազմակերպությունները, ֆինանսական, ապահովագրական ընկերությունները և հիմնադրամները, բոլոր կազմակերպատվական ձևերի կազմակերպությունների ֆինանսատնտեսագիտական ծառայությունները: Միաժամանակ կարող են աշխատել այն պաշտոններում, որոնք համաձայն ղեկավարների, մասնագետների և ծառայողների պաշտոնների որակավորման սանդղակի պահանջում են բարձրագույն տնտեսագիտական կրթության առկայություն:

1.3.2. Մասնագիտական գործունեության օբյեկտները.

Բոլոր տեսակի տնտեսավարող սուբյեկտների, այդ թվում՝ ագրոպարենային ոլորտի սուբյեկտների ակտիվները, պարտավորությունները, կապիտալը, եկամուտները և ծախսերը, շահույթը և հարկերը, ֆինանսական տվյալների բազաները և արդյունքները, տնտեսական վերլուծության, փորձագիտության և խորհրդատվության օբյեկտները, հաշվառման, հաշվետվության և աուդիտի, վերահսկման և վերստուգման օբյեկտները՝ ֆինանսավարկային կազմակերպությունների և տնտեսավարող սուբյեկտների հիմնական, գործառնական, ներդրումային, ապահովագրական և այլ ֆինանսատնտեսական գործունեություններում:

1.3.3. Մասնագիտական գործունեության տեսակները.

Կազմակերպա-կառավարչական, ֆինանսական և վարկային, բանկային և բորսային, ներդրումային և ապահովագրական, փորձագիտական, հարկային, սեփականության գնահատման, վիճակագրական, գիտահետազոտական:

1.3.4. Մասնագիտությանը հարմարվելու հնարավորությունը.

Բակալավրը կարող է հարմարվել հարակից մասնագիտական գործունեության հետևյալ տեսակներին՝ հաշվավերլուծական, հաշվապահական հաշվառման, վերահսկման-վերստուգման, մարքեթինգի, աուդիտորական, խորհրդատվական, նորմատիվային, գիտամեթոդական և գիտամանկավարժական (իր մասնագիտության գծով), արտաքին տնտեսական, արտարժույթի և արժեթղթերի շուկայի, իրավական:

1.4. Շրջանավարտի կրթությունը շարունակելու հնարավորությունը

311112 - «Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում» մասնագիտությամբ

դասիչ, մասնագիտության անվանում

բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած տնտեսագիտության բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու՝

որակավորման աստիճան

- կրճատված ժամկետներում՝ ստանալու բակալավրի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով,
- մագիստրատուրայում՝ ստանալու տնտեսագիտության մագիստրոսի որակավորման աստիճան:
որակավորման աստիճան

1. ԴԻՄՈՐԴԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁ-ՆԵՐԸ

2.1. Դիմորդի նախորդող նվազագույն կրթական մակարդակը՝
միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն:

2.2. Դիմորդը պետք է ունենա՝

պետական նմուշի վկայական՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության, կամ միջին մասնագիտական կրթության, կամ նախնական մասնագիտական մրթության մասին, որում կա գրառում դիմորդի միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստանալու մասին, կամ բարձրագույն մասնագիտական կրթության մասին:

2. 311112 - «ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
դասիչ, մասնագիտությ ան անվանում

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏ-
որակավորման աստիճան

ՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

3.1. Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը
որակավորման աստիճան

մշակվում է սույն պետական կրթական չափորոշիչով և ներառում է՝ մասնագիտության ուսումնական պլանը, ուսումնական դասընթացների և պրակտիկաների ծրագրերը:

3.2. Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի
որակավորման աստիճան

բովանդակության պարտադիր նվազագույնի իրականացման պայմաններին և ուսումնառության ժամկետներին ներկայացվող պահանջները կանոնակարգվում են սույն պետական կրթական չափորոշիչով:

3.3. Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը
որակավորման աստիճան

ձևավորվում է հանրապետական, բուհական, ուսանողի կողմից ընտրովի և ֆակուլտատիվ բաղադրիչների դասընթացներից:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացները յուրաքանչյուր կրթաբլոկում պետք է լրացնեն հանրապետական բաղադրիչում նշված դասընթացների անվանացանկը:

3.4. Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը
որակավորման աստիճան

պետք է նախատեսի հետևյալ կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների ուսումնասիրումը՝

ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական՝	ՀՍ,
ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական՝	ԸԲ,
ընդհանուր մասնագիտական՝	ԸՄԴ,
մասնագիտացման՝	ՄԴ,
ֆակուլտատիվ՝	Ֆ,

ինչպես նաև եզրափակիչ պետական որակավորումը:

3.5. Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի

որակավորման աստիճան

բուհական բաղադրիչի բովանդակությունը պետք է ապահովի շրջանավարտի պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված որակավորման բնութագրի համաձայն: Բուհական բաղադրիչում ընդգրկված դասընթացները երաշխավորական բնույթ են կրում:

3. **31112 - «ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»**

դասիչ, մասնագիտության անվանում

ՄԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ

որակավորման աստիճան

ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Դասընթացների անվանումը և նրանց հիմնական բաժինները

2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ

1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ
2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
3. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4. ՌՈՒՍԱՅ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ
5. ՕՏԱՐ ԼԵԶՈՒ
6. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ
7. ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
8. ԶԱՂԱԶԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
9. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ
10. ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
11. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ 136 ԺԱՄ

Ֆիզիկական կուլտուրան ուսանողների ընդհանուր կուլտուրական և մասնագիտական պատրաստվածության գործընթացում: Նրա սոցիալ-կենսաբանական հիմունքները: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես հասարակական երևույթներ: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ֆիզիկական կուլտուրայի մասին: Անհատի ֆիզիկական կուլտուրան: Ուսանողի առողջ կենսակերպի հիմքերը: Աշխատունակության օպտիմալացման նպատակով ֆիզիկական կուլտուրայի միջոցների օգտագործման առանձնահատկությունները: Ընդհանուր ֆիզիկական և հատուկ պատրաստությունը ֆիզիկական դաստիարակության համակարգում: ՍՊՈՐՏ. Սպորտի կամ ֆիզիկական վարժությունների համակարգի անհատական ընտրություն: Ուսանողների մասնագիտական-կիրառական, ֆիզիկական պատրաստությունը: Ինքնուրույն պարապմունքների մեթոդիկայի հիմունքները և սեփական օրգանիզմի վիճակի ինքնավերահսկումը:

2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ

Հայ ժողովրդի նախապատմությունը, Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղերը և ցեղային միությունները, հայ ժողովրդի կազմավորումը: Վանի թագավորությունը Երվանդունիների թագավորությունը» Մեծ Հայքի միասնական թագավորությունը: Հայաստանի հզորացումը Տիգրան Մեծի օրոք. Արտաշեսյան թագավորության անկումը: Արշակունյաց թագավորության հաստատումը Հայաստանում (I-IVդդ.) հայ ժողովրդի ազատագրական պայքարը (V-VIդդ.): Ավարայրի ճակատամարտը, Հայաստանի նոր բաժանումը: Հայաստանը արաբական խալիֆայության տիրապետության տակ (VII-IXդդ.), Հայաստանի ան կախության վերականգնումը և Բագրատունիների թագավորության հաստատումը (IX-XIդդ.): Հայաստանը սելջուկ-թուրքերի և մոնղոլների տիրապետության շրջանում (XI-XVդդ.) Կիլիկիայի հայկական պետությունը (XI-XIVդդ.): Հայաստանը XV-XVIIIդդ., թուրք պարսկական պատերազմները և Հայաստանի բաժանումը, հայ ազատագրական պայքարի վերելքը XYIII դարում:

Հայ մշակույթը X-XVIIIդդ.: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, XIX դ. ռուս-թուրքական պատերազմները: Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կեցությունը XIX դ. կեսերին: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները և ազգային կուսակցությունների ձևավորումը: Հայաստանը XXդ. սկզբներին, հայ ժողովուրդը Առաջին Աշխարհամարտի տարիներին, Մեծ եղեռնը, ինքնապաշտպանական մարտերը: Հայաստանի անկախության հռչակումը և Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումը (1917-1921): Հայաստանի երկրորդ հանրապետությունը, հայ ժողովուրդը Երկրորդ Աշխարհամարտի տարիներին և Հետպատերազմյան շրջանում, Հայկական Սփյուռքը (1921-2000թ.): Հայաստանը վերակառուցման շրջանում, ազգային-ազատագրական շարժումը և Արցախյան գոյամարտը: Հայաստանի անկախության հռչակումը և երկրորդ հանրապետության ստեղծումը: Հայաստանը արդի շրջանում: Հայկական մշակույթը, գիտությունը և տնտեսությունը, XXդ. 2-րդ կեսերին:

3. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ

Լեզուն, որպես հաղորդակցման միջոց, լեզու և խոսք, լեզու և մտածողություն, լեզու և հոգեբանություն: Բանավոր խոսք, ճարտասանության հիմունքներ, խոսքի ներգործման միջոցները, հնչերանգ, առոգանություն, դիմախաղ: Խոսքի տրամաբանվածություն, նպատակահարմար կառուցվածք, համոզականություն, հուզականություն:

Գրավոր խոսք. տրամաբանություն և քերականություն, մայրենի լեզու և լեզվամտածություն, գրավոր և բանավոր խոսքի ընդհանրությունները և տարբերությունները: Հայերենը հնդեվրոպական լեզու, զարգացման փուլերը: Ժամանակակից հայոց լեզուն որպես ազգային, պետական, գրական և գրականության լեզու: Ժողովրդախոսակցական լեզու, ժամանակակից հայոց լեզվի զարգացման միտումները: Հասկացություն բառապաշարի մասին, ընդհանուր բնութագիրը, հիմնական բառաֆոնդը, ծագումնաբանությունը, բիկ հայերենը, փոխառյալ բառեր: Բառապաշարի հարստացման ուղիները, բառապաշար և ոճ: Իմաստաբանություն, բառի իմաստային տիպերը և տեսակները, իմաստափոխություն և նրա տեսակները, հոմանիշ, համանիշ, և հականիշ բառեր, նրանց ոճական արժեքը: Դարձվածքաբանություն. գաղափար դարձվածքի մասին, դարձվածքի տեսակները ըստ իմաստի և կառուցվածքի, ըստ ծագման և գործածության:

Տերմինաբանություն. տերմին և բառ, տերմինների համակարգայնությունը, մասնագիտական և զբաղմունքային բառապաշար, տարբեր բնագավառների տերմինահամակարգեր: Փոխառությունը և նրա անհրաժեշտությունը, փոխառությունը, որպես բառապաշարի հարստացման միջոց: Փոխառության եղանակները և տեսակները:

Ոճաբանություն. գաղափար ոճի մասին, ոճի տեսակները՝ խոսակցական, վարչագործարարական, գիտական, հրապարակախոսական, գեղարվեստական, իրավիճակային և անհատական:

Թարգմանություն և նրա տեխնիկական՝ տողացի, բնագրին հարազատ և ազատ թարգմանություն. թարգմանության հիմունքները՝ բնագրի բովանդակության վերարտադրման ստույգություն, հեղինակային ոճի պահպանում: Տեխնիկական թարգմանությունը որպես գիտատեխնիկական մտքի զարգացման նախադրյալ. տեխնիկական և գեղարվեստական տեքստերի թարգմանության ընդհանրությունները և տարբերությունները:

Տեքստագիտություն և խմբագրում. տեքստերի տեսակները, կառուցվածքը՝ վերնագիր, առաջաբան, վերջաբան, ծանոթագրություն, ցանկ, հավելված: Տեխնիկական և գեղարվեստական տեքստերի խմբագրման առանձնահատկությունները: Մասնագիտական և գիտական խմբագրում, գիտական ոճի պահպանում: Փաստաթղթավորության հիմունքները. փաստաթղթերի հիմնական տեսակները՝ գործնական գրություններ և մասնագիտական փաստաթղթեր:

4. ՌՈՒՄԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ 4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ

Արդի ռուսաց լեզվի ոճը, լեզվային նորմը և նրա դերը գրական լեզվի գրական լեզվի կայաց-

ման և գործառնության մեջ: Խոսքային փոխգործողություն, հաղորդակցման հիմնական միավորները, լեզվի բանավոր և գրավոր տարատեսակները, բանավոր և գրավոր խոսքի նորմատիվային, հաղորդակցական և էթիկական տեսակները: Արդի ռուսաց լեզվի գործառնային ոճերը և դրանց փոխգործողությունը: Գիտական ոճ. գիտական խոսքում լեզվային տարբեր մակարդակների տարրերի օգտագործման առանձնահատկությունները, ուսումնական և գիտական գործունեության ոլորտների լեզվային նորմերը: Պաշտոնական-գործարար ոճը և նրա գործառնական ոլորտը, ժանրային տարատեսակությունները, պաշտոնական փաստաթղթերի լեզվային ձևերը, ծառայողական փաստաթղթերի միասնականացման եղանակները, ռուսական պաշտոնական-գործարար գրավոր խոսքի հատկությունները, կարգադրական փաստաթղթերի լեզուն և ոճը: Առևտրային ոլորտի թղթարարության, կարգացույցային-մեթոդական փաստաթղթերի լեզուն և ոճը: Գովազդը գործարար խոսքում, խոսքային էթիկետը և փաստաթղթերի ձևավորման կանոնները: Ժանրային տարբերակումը և լեզվային միջոցների ընտրությունը հրապարակախոսական ոճում, բանավոր հրապարակախոսական լեզվի առանձնահատկությունները, հռետորը և նրա լսարանը, արգումենտների հիմնական տեսակները: Ելույթի նախապատրաստումը, թեմայի ընտրությունը, ելույթի նպատակը, նյութի որոնումը, խոսքի սկիզբը, զարգացումը և ավարտը, նյութի ընտրության հիմնական ձևերը և օժանդակ նյութերի տեսակները: Հրապարակային ելույթի լեզվային ձևավորումը, ելույթի արտահայտչականությունը, տեղեկատվությունը և հասկանալի լինելը: Ռուսաց գրական լեզվի ոճը: Խոսքի մշակույթը, գրավոր և բանավոր խոսքի ունակությունների կատարելագործման ուղիները:

5. ՕՏԱՐ ԼԵՁՈՒ 8 ԿՐԵԴԻՏ 240 ԺԱՄ

Անգերել լեզու

Հնչյունների արտասանության, ինտոնացիայի, շեշտադրական համակարգի և ուսուցանվող լեզվում խոսքի ռիթմի յուրահատկությունը, տառադարձության ընթերցանությունը: Ընդհանուր և տերմինաբանական բնույթի 2000 ուսուցողական բառային միավորով բառապաշարի նվազագույն: Ընդհանուր կիրառման բնագավառի (կենցաղային, տերմինաբանական, ընդհանուր գիտական, պաշտոնական և այլն) հասկացություն բառապաշարների տարբերական մասին: Հասկացություն բառակազմական հիմնական միջոցների մասին: Հասկացություն ազատ և կայուն բառակապակցությունների, դարձվածաբանական միավորների մասին: Գրավոր և բանավոր հաղորդակցության ժամանակ առանց իմաստի աղճատման ընդհանուր բնույթի հաղորդակցումն ապահովող քերականական երևույթներ: Ուսումնասիրվող լեզվի երկրների մշակույթը և սովորույթները:

Բանավոր խոսքը: Պաշտոնական և ոչ պաշտոնական շփման ընդհանուր հաղորդակցական իրադրություններում առավել չափով օգտագործվող հարաբերականորեն պարզ բառային-քերականական միջոցների օգտագործումը երկխոսության մեջ և անհատական խոսքում: Հրապարակային խոսքի հիմունքները (բանավոր հաղորդում, զեկույց): Ունկնդրում: Կենցաղային և մասնագիտական հաղորդակցման բնագավառներում երկխոսության և անհատական խոսքի ըմբռնումը:

Ընթերցանություն: Տեքստերի տեսակները. ոչ բարդ գործնական բնույթի և լայն մասնագիտական ուղղվածության տեքստեր:

Գրավոր խոսքը: Խոսքային ստեղծագործությունների տեսակները. կենսագրություն, փոքր զեկույցներ, անձնական նամակ, գործնական նամակ, ռեֆերատ:

Գերմաներեն լեզու

Ծրագիրը ենթադրում է գերմաներեն լեզվի իմացության գործնական կիրառում, լեզվին բնորոշ ճիշտ շեշտադրություն և արտասանություն: Զերականական անհրաժեշտ գիտելիքների ձեռք բերումը, նրանց կիրառումը բանավոր խոսքում և թարգմանչական աշխատանքում: Ուսուցողական ընդհանուր բառապաշարի և տերմինաբանական բնույթի 2000 բառային նվա-

զագույն միավոր: Բառապաշարի տարբերակում ըստ կիրառման բնագավառի (կենցաղային, տերմինաբանական, գիտական, պաշտոնական): Ընդհանուր հասկացություն բառակազմությանը վերաբերող միջոցների մասին: Ընդհանուր հասկացություն ազատ և կայուն բառակապակցությունների և դարձվածաբանության վերաբերյալ: Քերականական հմտությունների իմացությունը գրավոր և բանավոր հաղորդակցության ժամանակ առանց աղճատման ընդհանուր բնույթի հաղորդակցումն ապահովելու համար: Ոստումնասիրվող լեզվի երկրների մշակույթի և սովորույթների յուրացում: Ընկալումը բանավոր խոսքի ընթացքում: Առաջադրված հարցերին համապատասխանորեն արձագանքելու կարողություն: Անհատական խոսքով և երկխոսությամբ ներկայացվող տեքստեր: Հրապարակային խոսքի հիմունքները (բանավոր հաղորդում, գեկույց և այլն): Տեքստերի ճիշտ ընտրություն՝ ոչ բարդ գործնական բնույթի և լայն մասնագիտական բնույթի: Գրավոր խոսքի զարգացում, որն ուղեկցվում է տարբեր խոսքային ստեղծագործությունների հիմքի վրա՝ գեկույցներ, ռեֆերատներ:

Ֆրանսերեն լեզու

Ֆրանսերեն հնչյունների արտաբերման առանձնահատկությունները, շեշտադրությունն ու ռիթմիկ խմբերը, խոսքի մեջ ֆրանսերենին բնորոշ հնչյունների կապակցման ձևերը, ֆրանսերեն նախադասության ինտոնացիան՝ կախված նախադասության բնույթից, ուղղագրական նշանները: Նվազագույն բառապաշարը՝ մոտ 2000 բառային միավոր, պետք է լինի ինչպես ընդհանուր բնույթի, այնպես էլ մասնագիտական բնույթի: Խոսքային գիտելիքների ուսուցանումը պետք է ունենա տարբերակված բնույթ՝ ըստ գործածության ոլորտի (կենցաղային, տերմինաբանական, ընդհանուր գիտական, պաշտոնական և այլն): Գաղափար կայուն բառակապակցությունների, դարձվածաբանական միավորների մասին: Գաղափար բառակազմական հիմնական ձևերի մասին: Քերականական այնպիսի գիտելիքների և հմտությունների ձեռքբերում, որոնք հնարավոր են դարձնում ուսանողի գրավոր կամ բանավոր հաղորդակցությունը ընդհանուր թեմաների շուրջ, ինչպես նաև այնպիսի գիտելիքների ուսուցում, որոնք անհրաժեշտ են մասնագիտական խոսքի զարգացման համար: Ֆրանսիայի մշակույթի, քաղաքակրթության, ազգային ավանդույթների մասին տեղեկատվության: Հնարավորին շատ և վարժ խոսելու հմտություն. առավել գործնական և հարաբերականորեն պարզ բառային-քերականական միջոցների օգնությամբ երկխոսության ծավալում կամ շարադրանքի հիմնական հաղորդակցային իրավիճակներում՝ պաշտոնական և ոչ պաշտոնական շփումների ժամանակ, ծանոթացում մամուլի լեզվին (բանավոր հաղորդում, գեկույց և այլն):

Ընթերցանություն. ոչ բարդ տեքստերի ընթերցում ինչպես լայն պրոֆիլի, այնպես էլ մասնագիտական բնույթի,

Գրավոր խոսք. գեկույցումներ, շարադրություններ:

6. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ 4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ

Փիլիսոփայության առարկան: Փիլիսոփայության ձևավորումը, հետազոտության ոլորտները, աշխարհայացքային հիմնախնդիրները: Փիլիսոփայական գիտելիքների կառուցվածքը: Փիլիսոփայության տեղը և դերը գիտության ու մշակույթի ոլորտում: Փիլիսոփայության զարգացման հիմնական փուլերը: Անտիկ Հունաստանի, միջին դարերի, հայոց քրիստոնեական ջատագովական, նոր և նորագույն ժամանակաշրջանի փիլիսոփայական միտքը: Ուսմունք կեցության մասին: Տարածությունը, ժամանակը, շարժումը կեցության դրսևվորման եղանակ: Շարժման, ժամանակի, տարածության վերաբերյալ դասական և հարաբերականության տեսությունները: Շարժում և զարգացում: Դետերմինիզմ և ինդետերմինիզմ: Օրենք և օրինաչափություն: Գիտակցություն: Նյութականը և իդեալականը: Գիտակցականը և անգիտակցականը: Լեզու և մտածողություն: Ճանաչողություն: Առօրեական, գիտական, կրոնական, փիլիսոփայական ճանաչողություն: Գիտելիք և հավատ: Ըմբռնում և բացատրություն: Իմացության զգայական և ռացիոնալ աստիճանները: Ստեղծագործության, բանավեճի, փաստարկման, ինտուիցիայի դերը կենսաբանական հետազոտություններում: Ճշմարտության հիմնա-

խնդիրը: Ճշմարտության կոնկրետությունը, բացարձակությունը, օբյեկտիվությունը, հարաբերականությունը: Ճշմարտության չափանիշները: Գիտական ճանաչողության կառուցվածքը: Գիտական իմացության էմպիրիկ և տեսական մակարդակները: Գիտական հետազոտության մեթոդները: Գիտության դերի արժեքավորումները փիլիսոփայության մեջ: Գիտատեխնիկական հեղափոխություն: Մարդու կեցության իմաստը: Մարդը սոցիալական միջավայրի արդյունք, կենսաբանական, հոգեկան նախահիմքերի ամբողջություն: Ազատություն և պատասխանատվություն: Բարոյականություն, արդարություն, իրավունք: Բարոյական արժեք: Գեղագիտական և կրոնական արժեքներ: Խղճի ազատություն: Բնություն և հասարակություն: Հասարակության դասային շերտավորման հիմքերը: Քաղաքացիական հասարակություն և պետություն: Ազատություն և անհրաժեշտություն: Հասարակության զարգացման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Սոցիալական հեղափոխություն: Փիլիսոփայության հիմնական ուղղությունները և դպրոցները: 20-րդ դարի փիլիսոփայական հիմնական հոսանքները: Կենսաբանության և էկոլոգիայի փիլիսոփայական հիմնախնդիրները: Էկոլոգիան և քաղաքականությունը: Էկոլոգիական աղետ: Բնապահպանական շարժումներ:

7. ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ 4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ

Պետությունն ու իրավունքը: Պետության և իրավունքի ծագումը, էությունը, հատկանիշները, գործառույթները, կառուցակարգը, ձևերը: Իրավունքի նորմերը և աղբյուրները: Նորմատիվային իրավական ակտերի հասկացությունը, տեսակները: Օրինականության հասկացությունը: Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգը: Իրավունքի ճյուղերը: Սահմանադրական իրավունք: Քաղաքացիական իրավունք: Իրավաբանական անձինք: Սեփականության իրավունք: Գրավի իրավունք: Գործարքներ և ներկայացուցչություն: Պարտավորություններ: Պայմանագիր: Ժառանգական իրավունք: Աշխատանքային իրավունք: Վարչական իրավունք: Քրեական իրավունք: Հողային իրավունք: ՀՀ Հողային օրենսդրությունը: ՀՀ դատական համակարգը: Դատախազության մարմինների համակարգը: ՀՀ ոստիկանության մարմինները: Արդարադատությունը և դրա խնդիրները: Քաղաքացիական դատավարության իրավունքը: Քրեական դատավարության իրավունքը: Միջազգային իրավունք: Միջազգային իրավունքի սկզբունքները և սուբյեկտները: Միջազգային պայմանագրեր: Միջազգային իրավունքի աղբյուրները:

8. ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Քաղաքագիտության օբյեկտը և առարկան, մեթոդները և գործառնությունները: Քաղաքագիտության և այլ հասարակագիտական առարկաների փոխհարաբերությունները: Քաղաքական ուսմունքների հիմնական փուլերը (Անտիկ Աշխարհի, միջնադար, նոր և նորագույն շրջան): Հայ քաղաքական մտքի ավանդույթները, արմատները, սոցիալ-մշակութային հիմքերը: Արդի քաղաքագիտական դպրոցները: Քաղաքականություն և քաղաքական իշխանություն: Քաղաքական իշխանության իրականացման մեխանիզմը, արդյունավետությունը և լեգիտիմությունը: Քաղաքական համակարգ: Քաղաքական ռեժիմ (վարչակարգ): Դեմոկրատիայի ժամանակակից տեսություններն ու մոդելները: Պետություն, գործառույթները, ձևերը: Պետական իշխանության մարմինները Հայաստանում: Իրավական և սոցիալական պետություն: Խորհրդարան և խորհրդարանականություն: Կառավարման նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական ձևերի համեմատական վերլուծությունը: Քաղաքական իշխանության սոցիալական սուբյեկտները: Շահերի խմբեր, քաղաքական լիդերություն և քաղաքական լիդերներ, էլիտա: Ընտրություններ և ընտրական համակարգեր: ՀՀ ընտրական համակարգը: Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Բազմակուսակցական համակարգի կայացումը Հայաստանում: Քաղաքական գործընթացներ: Քաղաքական արդիականացում: Քաղաքական արդիականացման առանձնահատկությունները ՀՀ-ում: Քաղաքական կոնֆլիկտներ և դրանց լուծման ուղիները: Քաղաքական տեխնոլո-

գիաներ: Համաշխարհային քաղաքական գործընթացներ և միջազգային հարաբերություններ: Արդի համաշխարհային հարաբերությունների աշխարհաքաղաքական վերլուծություն: Հայաստանի ազգային շահերը նոր աշխարհաքաղաքական իրավիճակում: Քաղաքական գլոբալիստիկա. ընդհանուր բնութագիրը, համամարդկային հիմնահարցերի լուծման քաղաքական ուղիները: Քաղաքական կանխատեսում:

9. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Տնտեսագիտական սոցիոլոգիան որպես գիտություն, ուսումնասիրության առարկան, օբյեկտը և խնդիրները: Տնտեսագիտական սոցիոլոգիայի զարգացման փուլերը և դպրոցները: «Տնտեսական մարդու» և «սոցիոլոգիական մարդու» մոդելներն ու նրանց դերը տնտեսագիտական սոցիոլոգիայի զարգացման գործում: Տնտեսագիտական սոցիոլոգիայի ուսումնասիրության մեթոդները. փաստաթղթերի վերլուծություն, դիտում, հարցում: Հետազոտության արդյունքների վերլուծություն: Տնտեսական մոտիվացիա և ռացիոնալիզմի տիպեր: Անհատի պահանջմունքներ, խթաններ, շահեր, արժեքներ: Աշխատաշուկայի ձևավորումը և զարգացումը, գործազրկության ձևերը և դրա սոցիալ-հոգեբանական հետևանքները: Միգրացիա և դրա ազդեցությունը աշխատաշուկայի վրա: Մարդը տնտեսական կազմակերպությունում և աշխատանքային հարաբերություններում: Տնտեսական կազմակերպության հիմնական տիպերը և սոցիալական կառուցվածքը: Դեկավարման ձևեր և մեթոդներ: Տնտեսական ադապտացիա: Ադապտացիայի ձևերը և կառուցվածքը, փուլերը: Դեկավարման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Տնտեսական մշակույթի կառուցվածքը և ֆունկցիաները: Տնտեսական մշակույթի կառուցվածքը, տիպերը և ձևերը, ֆունկցիաները: Սոցիալ-տնտեսական շերտավորում և դրա ընդհանուր բնութագիրը: Սոցիալական շերտավորման էությունը, կապերը, ֆունկցիաները, չափանիշները: Սոցիալ-տնտեսական շարժունություն: Շարժունության բովանդակությունը, պատճառները, ձևերը, գործոնները: Շեղված տնտեսական վարքագիծ: Մարդու շեղված վարքագծի պատճառները, չափանիշները, ձևերը: Գործարարության հիմնախնդիրները տնտեսագիտական սոցիոլոգիայում: Գործարարության զարգացման պատմական տիպերը: Գործարարի սոցիալ-հոգեբանական կերպարի բնութագրություն: Սոցիալ-տնտեսական կոնֆլիկտներ: Կոնֆլիկտների հիմնական պատճառները, դրսևորման ձևերը, լուծման ուղիները: Մարդը տնտեսական գաղափարախոսության համակարգում: Տնտեսական գաղափարախոսության հիմնական տիպերը, կոնսերվատիզմ, լիբերալիզմ, սոցիալիզմ: Փող, ֆինանսներ, բորսա, հարկեր: Դրանց սոցիալ-հոգեբանական տեսանկյունները: Փողի նկատմամբ վերաբերմունք. հարկերից խուսափելու հոգեբանություն:

10. ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 2 ԿՐԵԴԻՏ 60 ԺԱՄ

Մշակութաբանություն և մշակույթի պատմություն: Մշակութաբանական տեսություններ: Մշակույթի կառուցվածք և գործառնություններ: Հոգևոր մշակույթը և նրա տարրերը: Մշակութային ժառանգորդում, նորարարություն, ավանդապահություն: Չանգվածային և էլիտար մշակույթ: Արևելք-Արևմուտք մշակութային առնչություններ: Մշակույթ և քաղաքակրթություն: Նախնադարի մշակույթ և դիցաբանական աշխարհայացք: Արվեստի տեսակների առաջացում: Հին աշխարհի մշակույթը. Միջագետք, Հնդկաստան, Չինաստան, Եգիպտոս, Հայաստան: Կրոնա-դիցաբանական, կրոնա-փիլիսոփայական համակարգեր և արվեստ: Անտիկ Աշխարհի մշակույթը. Հունաստան, Հռոմ: Կրոնա-դիցաբանական հավատալիքներ և արվեստ: Միջնադարյան մշակույթ և գեղարվեստական ոճեր: Վերածննդի մշակույթ: Հումանիզմ և արվեստ: Մշակույթը 17-20-րդ դարերում: Դարաշրջաններ և գեղարվեստական ուղղություններ: «Մշակութաբանություն» առարկայի դասընթացը նպատակ է հետապնդում ուսանողության մշակութաբանական զգացողության դաստիարակության գործում, ձևավորում նրանց մեջ մի նոր գիտակցություն, առանց որի անհնար է մարդկային կյանքը, մարդու գործունեությունը մշակույթից դուրս:

11. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 12 ԿՐԵԴԻՏ 360 ԺԱՄ

Տնտեսագիտության տեսության ընդհանուր հիմունքները:

Տնտեսագիտության տեսության առարկան, գործառույթները և մեթոդները: Տնտեսագիտության տեսության զարգացման հիմնական փուլերը: Տնտեսական մտածելակերպի հիմնական սկզբունքները: Բարիքը և նրա դասակարգումը: Պահանջմունքներ, ռեսուրսներ: Արտադրության գործոններ: Տնտեսական ընտրություն: Տնտեսական հարաբերություններ: Սեփականություն և տնտեսավարում: Տնտեսական համակարգերը, դրանց տիպերը և մոդելները: Արտադրական հնարավորությունների կորեր: Տնտեսական արդյունավետություն: Տնտեսական ռազմավարություն և տնտեսական քաղաքականություն:

Միկրոտնտեսագիտություն:

Շուկա: Առաջարկի օրենք, պահանջարկի օրենք: Անհատական և շուկայական պահանջարկ, հավասարակշռված գին: Սպառողի և արտադրողի ավելցուկներ, սպառողի և արտադրողի վարքագծերի տեսությունները: Պահանջարկի գործոնները: Եկամտի էֆեկտ և փոխարինման էֆեկտ: Առաձգականություն: Առաջարկը և նրա գործոնները: Սահմանային արտադրողականության անկման օրենքը: Մասշտաբի էֆեկտ: Մենաշնորհ, բնական մենաշնորհ, գնի էությունը, գործառույթները և համակարգը, գնային խտրականություն: Մրցակցությունը և նրա տեսակները: Օլիգոպոլիս, մենաշնորհային մրցակցություն, մուտքի և ելքի արգելքները ճյուղում, համեմատական առավելություն: Ձեռնարկության հասկացությունը, արտադրության համակենտրոնացումը և կենտրոնացումը, դիվերսիֆիկացիա: Արտադրական գործառույթ: Արտադրության գործոնների շուկաներ: Ծախսերը և դրանց տեսակները, հաստատուն, փոփոխուն, հաշվապահական, տնտեսական, սահմանային ծախսեր, այլընտրանքային ծախսեր: Հաշվապահական և տնտեսական շահույթ: Հասույթի և ծախսերի միջին և սահմանային մեծությունները, արդյունավետության, փոխհատուցում արտադրության մասշտաբից (նվազող, անփոփոխ, աճող): Ձեռներեցության տնտեսական բնույթը, գործառույթները և ակտիվացման պայմանները, տնտեսական ռիսկ: Աշխատանքի շուկա: Աշխատանքի առաջարկը և պահանջարկը: Աշխատավարձ և զբաղվածություն, բյուջետային սահմանափակում, անտարբերության կոր: Կապիտալի շուկա: Տոկոսադրույք և ինվեստիցիա: Հողի շուկա: Ռենտա: Ընդհանուր հավասարակշռություն և բարեկեցություն: Եկամուտների բաշխումը: Անհավասարություն: Պետության դերը:

Մակրոտնտեսագիտություն:

Ազգային տնտեսությունը որպես ամբողջություն: Մակրոտնտեսական ցուցանիշներ: Համախառն ներքին արդյունք, նրա հաշվարկման եղանակները: Ազգային եկամուտ: Տնօրինվող անձնական եկամուտ: Գների ինդեքսները: Ազգային հարստություն, նրա կառուցվածքը: Համախառն ներքին արդյունքի դինամիկան ՀՀ-ում: Ազգային տնտեսության ճյուղային և բաժանմունքային կառուցվածքներ: Ամբողջական պահանջարկ և ամբողջական առաջարկ, դրանց հավասարակշռություն (AD-AS մոդելը): Սպառում, խնայողություն, դրանց միջին և սահմանային հակումները, գործառույթները: Խնայողություն և ինվեստիցիա: Մակրոտնտեսական հավասարակշռություն և իրական տոկոսադրույք (IS-LM մոդելը): Մուլտիպլիկատորի էֆեկտը: Գործազրկությունը և նրա ձևերը: Ինֆլյացիան և նրա տեսակները: Տնտեսական պարբերաշրջանները: Տնտեսական աճը և տնտեսական զարգացումը: Տնտեսական աճի մոդելները: Պետական ծախսեր և հարկեր: Փողի էությունը, փողի շուկա, փողի պահանջարկը և առաջարկը, դրամաշրջանառություն, փողի տեսությունները: Պետական բյուջե, նրա դեֆիցիտը և ավելցուկը, արժույթի ֆիքսված և լողացող կուրս: Բանկային համակարգ: Գրամավարկային քաղաքականություն: Միջազգային տնտեսական հարաբերություններ: Արտաքին առևտուր և արտաքին քաղաքականություն: Վճարային հաշվեկշիռ: Տարադրամի կուրսը: Անցումային շրջանի հիմնական գծերը և առանձնահատկությունները ՀՀ-ում: Սեփականաշնորհում: Բաշխումը և եկամուտները: Տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը: Սոցիալական ոլորտի վերափոխումները: Բաց տնտեսության ձևավորումը:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական և դրան հարակից առարկաներն իրենցից ներկայացնում են գիտելիքների որոշակի հավաքածու: Այդ կուրսի հիմնական խնդիրներն են՝ օգնել առաջին կուրսի ուսանողներին հարմարվելու բուհական կյանքի պայմաններին և կանոնակարգային պահանջների կատարմանը:

Ծանոթացնել Ակադեմիայի համառոտ պատմությանը, կառուցվածքային ստորաբաժանումներին, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության գործունեությանը:

Ծանոթացնել ընտրած մասնագիտության հետ: Բացատրել 311104 - «Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում» մասնագիտության նպատակը և աշխատանքում նրա խնդիրներն ու առանձնահատկությունները:

Ծանոթացնել ուսումնական պլանում ընդգրկված առանձին դասընթացների կրթաբլոկներին, հատկապես պլանի մասնագիտական կրթաբլոկում ներառած «Ֆինանսների ընդհանուր տեսություն», «ՀՀ բյուջետային համակարգ», «Դրամ, վարկեր, բանկեր», «Ագրոպարենային համակարգի կազմակերպությունների ֆինանսներ», «Ագրոպարենային համակարգի ապահովագրություն», «Ֆինանսական մեներջմենթ», «Արժեթղթերի շուկա և բորսային գործ», «Շուկայական տնտեսության պետական կարգավորում», «Ինվեստիցիաների տնտեսական գնահատում», «Բանկային մեներջմենթ», «Ֆինանսական և բանկային վիճակագրություն» և «Ֆինանսական իրավունք» առարկաներին:

Մեթոդապես օգնել ուսուցման առաջին օրերին տնտեսագիտական մեթոդների յուրացմանը, սովորեցնել խնդիրների ձևակերպմանը և կարողանալ ընտրել դրանց լուծման արդյունավետ ճանապարհները:

Բացատրել, թե ինչպես օգտվել ինտերնետից, ինչպես կազմել դասախոսությունների բովանդակությունը, ինչպես գրել ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ, ինչպես նախապատրաստվել միջանկյալ և կիսամյակային քննություններին: Պարզաբանել, որ տնտեսագետը պետք է կարողանա մեկնաբանել տնտեսագիտական բնույթի խնդիրները և վերլուծել դրանք կոնկրետ իրավիճակներում: Կարողանա տիրապետել տնտեսագիտական տերմինաբանությանը և խոսելաոճին:

Բացատրել ուսանողների իրավունքներն ու պարտականություններն ամրագրող իրավական հիմքերը, նրանց վարքագծի նորմերն ու կանոնները, ուսանողների բարոյական ու նյութական խթանման համակարգը և ուսանողական ինքնակառավարման հարցերը:

Սովորեցնել գրադարանային գործի հիմունքները, տեղեկատվության սպասարկման կազմակերպումը, հեղինակային իրավունքների պաշտպանությունը, կազմակերպվող գիտաժողովների, մրցույթների և այլ միջոցառումների կարգը:

Ուսանողը ավարտելով բուհը, պետք է կարողանա աշխատել տնտեսագիտական ծառայություններում:

ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ

ԿՐՈՆԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ

1. ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ
2. ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
3. ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ
4. ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ
5. ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱ-

ԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ

6. ԱԳՐՈՒԷԿՈՒՈՒԳԻԱ ԵՎ ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄ
8. ԷԿՈՆՈՄԵՏՐԻԿԱ
9. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
10. ԲՈՒՄԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
11. ԱՅԳԵՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ
12. ԲՈՒՄԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
13. ԱՆԱՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
14. ԱՆԱՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
15. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 12 ԿՐԵԴԻՏ 360 ԺԱՄ

Անալիտիկ երկրաչափություն: Կոորդինատների մեթոդ: Հիմնական խնդիրները հարթության վրա: Ուղղի հավասարման տարբեր տեսքերը հարթության վրա: Երկու ուղիղների կազմած անկյունը: Երկրորդ կարգի կորեր: Գծային հանրահաշիվ: Որոշիչներ և նրանց հատկությունները: Գործողություններ մատրիցների հետ: Հակադարձ մատրից n անհայտով գծային հավասարումների համասեռ և ոչ համասեռ համակարգեր: Կրամերի կանոնը: m գծային հավասարումների համակարգեր: Գաուսի մեթոդը: Մատրիցի ռանգը: Կոմպլեքս թվեր: n չափանի վեկտորական և էվլիդյան տարածություններ: Վեկտորների սիստեմի գծային կախվածությունը և անկախությունը: Բազիս: Վեկտորների սիստեմի ռանգը: Գծային ձևափոխություններ և նրանց մատրիցը: Անցում մի բազիսից մյուսին: Մատրիցի սեփական արժեք և սեփական վեկտոր: Նրանց հատկությունները: Քառակուսային ձևեր: Քառակուսային ձևի բերումը կանոնական տեսքի: Մաթեմատիկական անալիզ: Թվային հաջորդականություններ: Անվերջ փոքր և անվերջ մեծ հաջորդականություններ և նրանց հատկությունները: Չուզամետ հաջորդականությունների հատկությունները: Մոնոտոն հաջորդականություններ: «π» թիվը: Մեկ փոփոխականի ֆունկցիան: Ֆունկցիայի սահմանը և անընդհատությունը: Երկու նշանավոր սահմաններ: Անընդհատ ֆունկցիայի հատկությունները: Ֆունկցիայի ածանցյալը և նրա երկրաչափական իմաստը: Ֆունկցիայի դիֆերենցիալը: Բարձր կարգի ածանցյալներ և դիֆերենցիալներ: Դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմները: Անորոշությունների բացումը: Ֆունկցիայի հետազոտումը դիֆերենցիալ հաշվի մեթոդներով և գրաֆիկի կառուցումը: Մի քանի փոփոխականների ֆունկցիաներ: Հիմնական հասկացողություններ, սահմանը և անընդհատությունը, մասնակի ածանցյալներ, դիֆերենցիա: Ածանցյալ ըստ ուղղության: Գրադիենտ: Ֆունկցիայի էքստրեմումները: Նվազագույն քառակուսիների մեթոդը: Անորոշ ինտեգրալ: Անորոշ ինտեգրալի հաշվման եղանակները: Ռ-ացիոնալ կոտորակների, իռացիոնալ և եռանկյունաչափական արտահայտությունների ինտեգրումը: Որոշյալ ինտեգրալ և նրա հատկությունները: Նյուտոն-Լայբնիցի բանաձևը: Որոշյալ ինտեգրալի հաշվման եղանակները: Անիսկական ինտեգրալներ: Որոշյալ ինտեգրալի կիրառությունները: Սովորական դիֆերենցիալ հավասարումներ: Անջատվող փոփոխականներով, համասեռ և համասեռի բերվող հավասարումներ: Առաջին կարգի գծային և գծայինի բերվող հավասարումներ: Երկրորդ կարգի գծային հաստատուն գործակիցներով համասեռ և ոչ համասեռ հավասարումներ: Թվային շարքեր: Շարքի զուգամիտությունը և տարամիտությունը: Դրական անդամներով շարքերի զուգամիտության հայտանիշները: Նշանափոխ շարքեր: Կամայական անդամներով շարքերի զուգամիտությունը: Բացարձակ և պայմանական զուգամետ շարքեր: Ֆունկցիոնալ շարքեր: Աստիճանային շարքեր: Թեյլորի և Մակլորենի շարքեր:

2. ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 3 ԿՐԵՂԻՏ 90 ԺԱՄ

«Կենսագործունեության անվտանգություն» առարկայի դերը, նպատակն ու խնդիրները: «Մարդ-մեքենա-միջավայր» համակարգը: Վտանգավոր և վնասակար արտադրական գործոնների բնութագիրը և առողջ ու անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծման հիմնական ուղիները: Կենսագործունեության անվտանգության միջոցառումների ներդրման տնտեսական արդյունավետության որոշումը: «Կենսագործունեության անվտանգության» բնագավառին վերաբերող նորմատիվա-իրավական փաստաթղթերը, հիմնական օրենսդրական ակտերը, աշխատանքային, քաղաքացիական և քրեական օրենսգրքերը: «Կենսագործունեության անվտանգության» ծառայության կառուցվածքը և խնդիրները, ղեկավարների և մասնագետների իրավունքներն ու պարտականությունները այս բնագավառում: Արտադրական վնասվածության և մասնագիտական հիվանդությունների ուսումնասիրման մեթոդները, տնտեսական հետևանքները և գնահատման եղանակները: Կենսագործունեության անվտանգության միջոցառումների պլանավորումը և ֆինանսավորումը: Աշխատատեղերի օդերևութաբանական և միկրոկլիմայական պարամետրերի նորմավորման սկզբունքները և նորմաները, չափման և հսկման միջոցներն ու եղանակները: Արտադրական աղմուկ, վիբրացիա և վնասակար ճառագայթումներ: Դրանցից պաշտպանվելու եղանակները, չափման և հսկման միջոցները: Էլեկտրոհարվածից պաշտպանվելու կազմակերպչական միջոցառումներն ու տեխնիկական միջոցները: Ամպրոպապաշտպանություն: Հրդեհ, հրդեհների սոցիալ-տնտեսական հետևանքները: Շենքերի և շինությունների հրակայունությունը, դրա բարձրացման եղանակները: Կրակմարիչ տեխնիկա: Տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: Հակահրդեհային ահագանգում և ջրամատակարարում: Հրդեհի ժամանակ մարդկանց էվակուացիայի, նյութական միջոցների հեռացման և պահպանման կարգը:

3. ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ 5 ԿՐԵԴԻՏ 150 ԺԱՄ

Ինֆորմատիկայի զարգացման հիմնական փուլերը, ուղղություններն ու բովանդակությունը: Ընդհանուր տեղեկություններ դասընթացի մասին: Դասընթացի առարկան, խնդիրները, նպատակը և դերը: Գաղափար ինֆորմացիայի և տվյալների մասին: Տվյալների տեսակները: Հաշվիչ (հաշվողական) մեքենայի, տեխնիկայի և ցանցերի բնութագրերը: Համակարգիչների թվաբանական հիմունքները: Համակարգիչների տրամաբանական հիմունքները: Ինֆորմացիայի չափման ու պահպանման միավորները:

Համակարգիչների տեխնիկական ապահովումը

Համակարգիչների հիմնական տարրերը, հանգույցները, բլոկները և ֆունկցիոնալ սարքերը, դրանց նշանակությունը, հիմնական բնութագրերը և ընդհանուր կառուցվածքը: Կենտրոնական պրոցեսոր, հիշատարներ, արտաքին սարքեր: Տեսատիպ, ստեղծաշար, տպիչ, մոդեմ, ֆաքս-մոդեմ, ջոյստիկ, մկնիկ, սկաներ: Համակարգչի միացման, սկզբնական բեռնավորման և անջատման կարգը:

Ալգորիթմացում

Ալգորիթմի հասկացողությունը և հատկությունները, հաշվողական պրոցեսների տեսակները: Ալգորիթմի ներկայացման բառային, բառաբանաձևային, գծապատկերային և ծրագրային եղանակները: Գծային, ճյուղային և ցիկլային կառուցվածքով ալգորիթմների նկարագրում: Ալգորիթմի մշակման փուլերը:

Ծրագրային ապահովում, ծրագրավորում: Համակարգային ծրագրային ապահովումը, նշանակությունն ու ֆունկցիաները: Օպերացիոն համակարգեր, օպերացիոն համակարգ, կիրառական ծրագրեր (Word) ծրագրավորման համակարգեր (BASIC, C++): Դրանց նշանակությունը, գործածման և կիրառման մեթոդները: Ծրագրավորման լեզուների դասակարգումը: Ծրագրավորման լեզուների տարրերը: Basic լեզվի ալգորիթմները, տվյալների տեսակները, նույնարկիչները, ծառայողական բառերը և ստանդարտ ֆունկցիաները: Լեզվի արտահայտությունները, օպերատորները:

4. ԻՆՖՈՐՄԱՏԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՀԱՍՏԱԿԱՐԳԵՐ 4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ

Դասընթացի առարկան, խնդիրները, ինֆորմատիկայի դերը, համակարգիչների տեսական հիմունքները: Համակարգիչների ստեղծման ու զարգացման փուլերը: Ֆունկցիոնալ սարքերի տրամաբանական ֆունկցիաները, սարքի տրամաբանական սխեման: Տրամաբանական դիզյունկցիա, կոնյունկցիա և բացասում գործողությունները: Համակարգիչների տեխնիկական ապահովումը, ներքին և արտաքին սարքեր, պրոցեսոր: Ինֆորմատիկայի մուտքագրման սարքեր (ստեղծաշար, ուղղորդիչ՝ մկնիկ, ցուցարկու՝ դիսփլեյ, տեսագիր՝ սկաներ և այլն): Ինֆորմատիկայի ելքավորման սարքեր (ցուցարկու, տպիչ և այլն): Արտաքին հիշատարք (Ինֆորմացիայի երկարատև պահպանման սարքեր): Ինֆորմացիայի հաղորդման սարքեր (մոդեմ, ֆաքս և այլ տիպի տերմինալներ):

Համակարգիչների ծրագրային ապահովումը

Համակարգային ծրագրեր՝ օպերացիոն համակարգեր, ծրագրեր-թաղանթներ, դրայվերներ և ուտիլիտներ: Գործիքային ծրագրային ապահովումը որպես ծրագրավորման համակարգ, ծրագրավորման լեզվի համակարգը, ծրագրավորման միջավայրի համակարգը, ստանդարտ ֆունկցիաների գրադարանը: Ստանդարտ ծրագրերի գրադարանը, օգտագործողի կիրառական ծրագրերը և կիրառական ծրագրերի փաթեթները:

Ալգորիթմացում: Ալգորիթմացումը, խնդիրների լուծման ալգորիթմների կառուցման մեթոդները: Ալգորիթմի հատկությունները:

Հաշվողական գործընթացների տեսակները, ալգորիթմի նկարագրման եղանակները, ալգորիթմի որակի որոշման եղանակները, ալգորիթմի մշակման փուլերը և կարգը:

Ծրագրավորում: Ծրագրավորումը որպես ինֆորմատիկայի ճյուղ, ծրագրեր կազմելու մեթոդներն ու ձևերը: Ծրագրավորման լեզուների դասակարգումը, ծրագրավորման լեզվի տարրե-

րը, ծրագրավորման լեզվի կառուցվածքները, ծրագրերի մշակումը, ծրագրի կատարման փուլերը:

Համակարգչային համակարգեր և ցանցեր: Համակարգչային ցանցեր, նրանց տիպերը: Տեղային, բաշվված, մոլորակային և նրանց տեխնիկական ու ծրագրային ապահովումը:

5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ 4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ

Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության համակարգը, խնդիրներն ու նշանակությունը: Քաղաքացիական պաշտպանության կառուցվածքն ու կազմավորումները: Արտակարգ իրավիճակներ, դրանց դասակարգումը, բնութագրերը, և կանխարգելման ուղիները: Ռադիացիոն և քիմիական վարակման օջախներ: Տեղանքի ռադիոակտիվ վարակում, ռադիոակտիվ վարակվածության աղբյուրները և ռադիոակտիվ ճառագայթման չափման միավորները: Մարտական թունավոր քիմիական նյութերի դասակարգումը, բնութագիրը, ներգործության ձևերը և դրանցից պաշտպանվելու եղանակները: Ռադիացիոն և քիմիական իրադրության գնահատման մեթոդները: Դոզաչափական և քիմիական հետախուզության սարքերի տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները: Բնակչության պաշտպանության կազմակերպումը արտակարգ և պատերազմական իրավիճակներում: Ապաստարաններ, հակառադիացիոն և պարզագույն թաքստոցներ: Անհատական պաշտպանական միջոցների տեսակները, դրանց պահպանման բաշխման և օգտագործման կարգը: Արտակարգ իրավիճակների ռիսկի գնահատումը: Ռիսկի կվանտիֆիկացիան, անհատական ռիսկի ուսումնասիրման և գնահատման մեթոդները: Արտակարգ և պատերազմական իրավիճակներում գյուղատնտեսական օբյեկտների գործունեության կայունության ապահովման հիմնական ուղղություններն ու մեթոդները: Արտակարգ և պատերազմական իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վթարային-վերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը: Գյուղատնտեսության վարումը ռադիոակտիվ աղտոտվածության պայմաններում:

6. ԱԳՐՈՒԷԿՈԼՈԳԻԱ ԵՎ ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Կենսոլորտը և մարդը: Էկոհամակարգեր, օրգանիզմները և միջավայրի փոխհարաբերությունները: Ագրոէկոհամակարգերը և դրանց գործելակերպը տեխնոգենեզիսի պայմաններում: Շրջակա միջավայրի գլոբալ հիմնախնդիրները: Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և բնության պահպանության էկոլոգիական սկզբունքները: Միջազգային համագործակցությունը և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները: Մթնոլորտի օդի, ջրի, հողերի, բուսական ու կենդանական աշխարհի պահպանությունը և դրանց արդյունավետ օգտագործումը: Քիմիացման էկոլոգիական հիմնախնդիրները: Բույսերի պաշտպանության կենսաբանական պայքարը և շրջակա միջավայրը: Երկրագործության ավանդական և այլընտրանքային համակարգերը: Կենսաբազմազանությունը և էկոհամակարգերի կայունությունը: Էկոլոգիական տեսակետից անվտանգ գյուղատնտեսական մթերքների արտադրության տեխնոլոգիաները: Կայուն էկոհամակարգերի ստեղծման սկզբունքները: Ռեսուրսախնայողական տեխնոլոգիաները գյուղատնտեսության մեջ: Ագրոէկոլոգիական մոնիթորինգ, տարածքների էկոլոգիական վիճակի գնահատումը: Էկոլոգիական քաղաքականությունը և գյուղատնտեսության էկոլոգիացման հիմնախնդիրները:

7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄ 2 ԿՐԵԴԻՏ 60 ԺԱՄ

Գյուղ. արտադրությունում օգտագործվող տրակտորների ընդհանուր կառուցվածքը, դրանց աշխատանքների և տեխնիկատնտեսական ցուցնաիշները: Հողի մշակության, ցանքի և տնկման, բույսերի խնամքի ու պաշտպանության, կերերի հավաքման ու հացահատիկային

մշակաբույսերի բերքահավաքի, հացահատիկի գոման ու տեսակավորման, ինչպես նաև մեղիորատիվ մեքենաների կառուցվածքն ու աշխատանքը: Կերերի նախապատաստման ու բաշխման, ջրամատակարարման, կթի և կաթի նախնական մշակման, ոչխարների խուզի և բրդի տեսակավորման, ինչպես նաև գոմաղբի հավաքման ու հեռացման մեքենասարքավորումները: Արտադրական գործընթացների տեսակները, մեքենատրակտորային ագրեգատների (ՄՏԱ) դասակարգման սկզբունքները, դրանց տեխնոլոգիական և շահագործական բնութագրերը, ՄՏԱ համալրման եղանակները, դրանց կինեմատիկական ու տեխնիկատնտեսական ցուցանիշների (արտադրողականության, աշխատածախսումների, վառելանյութի ծախսի) որոշման սկզբունքները:

8. ԷԿՈՆՈՄՆԵՏՐԻԿԱ 5 ԿՐԵԴԻՏ 150 ԺԱՄ

Էկոնոմետրիկ մեդելավորման հիմնական ասպեկտները, փուլերը, գույգային ռեգրեսիոն կոռելյացիա, բազմակի ռեգրեսիա և կոռելյացիա, փոքր քառակուսիների մեթոդը, կոռելյացիայի և դետերմինացիայի գործակիցները, գծային, ոչ գծային ռեգրեսիոն մոդելները, ժամանակային շարքերը Էկոնոմետրիկ հետազոտություններում, տրենդային միտումի, պարբերական և սեզոնային տատանումների բացահայտումը, ժամանակային շարքերի մոդելների հիման վրա կանխատեսման իրականացումը, վիճակագրական տվյալների վերլուծության և ընդհանրացման հիմնախնդիրները:

9. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Երկրագործություն

Գյուղատնտեսության արտադրության առանձնահատկությունները: Երկրագործություն առարկան, խնդիրները և կապը այլ առարկաների հետ: Բույսի կյանքի անհրաժեշտ գործոնները, դրանց դերը բույսի կյանքում: Երկրագործության օրենքները: Բույսի կյանքի գործոնների կանոնավորումը (ռեժիմները) երկրագործության մեջ: Մոլախոտային բուսականությունը և նրա դեմ պայքարի միջոցառումները: Հողի մշակումը, խնդիրները: Հողի մշակման համակարգերը: Ցանքաշրջանառությունների գիտական հիմնավորումը, դասակարգումը և դրանց ագրոտեխնիկական և տնտեսակազմակերպական դերը: Երկրագործության համակարգերը և դրանց ժամանակակից բաղկացուցիչ մասերը:

Հողագիտություն

Հողը և դրա բերրիությունը, բերրիության տեսակները: Բերրիության բարձրացման միջոցառումները: Հայաստանի հիմնական հողային տիպերը, հիմնական հատկությունները և գյուղատնտեսական օգտագործումը: Հողային կադաստր, նշանակությունը: Հողերի բոնիտումը և տնտեսական գնահատումը:

Ագրոքիմիա

Հանքային և օրգանական պարարտանյութերի հիմնական տեսակները: Հաշվարկներ պարարտանյութերի չափաբաժինների վերաբերյալ. ծրագրավորվող բերքի անհրաժեշտ պարարտանյութերի քանակի և տնտեսական արդյունավետության հաշվարկներ:

10. ԲՈՒՍԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Բուսաբուծությունը որպես՝ արտադրության ճյուղ, նրա խնդիրները: Դաշտային մշակաբույսերի խմբավորումը: Մերմնաբուծությունը որպես բերքատվության բարձրացման կարևոր պայման: Հացահատիկային և հատիկաբնույթի մշակաբույսերի սորտային կազմը, կենսաբանական առանձնահատկությունները և մշակության տեխնոլոգիաները: Կարտոֆիլի, շաքարի և կերի ճակնդեղների, ծխախոտի և կերային մշակաբույսերի կենսաբանական և մշակության առանձնահատկությունները: Բանջարաբուծությունը որպես բուսաբուծության

ճյուղ: Բանջարաբուստանային մշակաբույսերի սորտային կազմը և մշակության տեխնոլոգիաները բաց և փակ գրանտում:

11. ԱՅԳԵՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Բուսաբուծությունը որպես գիտություն և արտադրության ճյուղ, նրա խնդիրները: Դաշտային մշակաբույսերի խմբավորումը, նրանց ընդհանուր բնութագիրը և ժող. տնտեսական նշանակությունը: Հանրապետության համար կարևորագույն մշակաբույսերի կենսաբանական և մշակության առանձնահատկությունները, սորտային կազմը: Դրանց մշակության տեխնոլոգիաների առանձնահատկությունները գյուղացիական /ֆերմերային/ տնտեսություններում: Հիմնական մշակաբույսերի կենսաբանական առանձնահատկությունները, սորտային կազմը և մշակության տեխնոլոգիաները բաց և փակ գրանտում: Խաղողի վազի և պտղատու մշակաբույսերի ազդու կենսաբանական հիմունքները: Վեգետատիվ բազմացում և տնկանյութի անճեցման տեխնոլոգիա, այգու հիմնումը և խնամքը, խաղողի և պտուղների արտադրության մասնագիտացումը և սորտերի տեղաբաշխումը ըստ ՀՀ գյուղատնտեսական գոտիների: Սորտերի կենսաբանական և արտադրատնտեսական առանձնահատկությունները:

12. ԲՈՒՍԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՀՊԱՆՍԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՍԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 2 ԿՐԵԴԻՏ 60 ԺԱՄ

Որպես վերամշակման օբյեկտ բուսական հումքի բնութագիրը և որակի գնահատումը, հացահատիկի, լոբազգիների, յուղատու մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի, մրգերի և հատապտուղների, շաքարի ճակնդեղի և ծխախոտի նախապատրաստման և վերամշակման սկզբունքները, մեթոդներն ու գործընթացները, դրանց էությունը և արտադրության տարբեր ոլորտներում կիրառման առանձնահատկությունները: Բուսաբուծական արտադրանքի պահպանության սկզբունքները, մեթոդներն ու եղանակները, հացահատիկի, լոբազգիների, յուղատու մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի, մրգերի և հատապտուղների, շաքարի ճակնդեղի և ծխախոտի պահպանության տեխնոլոգիաները: Հացահատիկի, լոբազգիների, յուղատու մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի, մրգերի և հատապտուղների, շաքարի ճակնդեղի և ծխախոտի վերամշակման տեխնոլոգիաները, պահածոյագործության և գինեգործության հիմունքները, կոմբինացված կերերի արտադրություն:

13. ԱՆԱՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 3 ԿՐԵԴԻՏ 90_ԺԱՄ

Անասնապահությունը որպես ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղ, վարման համակարգը, նախապայմանները և հիմնախընդիրները: Ռեգիոնալ անասնապահության կողմնորոշիչները: Գյուղատնտեսական կենդանիների տնտեսական հատկանիշները, ցեղագոյացման գործոնները, ցեղերի դասակարգումը և կատարելագործման ու շրջայնացման խնդիրները: Կենդանիների համակազմվածքը, աճի ու զարգացման օրինաչափությունները, հաշվառման մեթոդները: Նախիրների և հոտերի սերնդատվությունը, վերարտադրությունը և մթերատվությունը: Բուծման հիմունքները սելեկցիոն տոհմային պլան: Կենդանիների կերակրման հիմունքները: Կերերի դասակարգումը, դրանց սննդարարության համալիր գնահատումը: Նորմավորված կերակրման խնդիրները: Անասնապահության կերի բազայի ամրապլնդման ուղիները: Տավարաբուծության, ոչխարաբուծության, խոզաբուծության, թռչնաբուծության և մասնավոր անասնաբուծության այլ ճյուղերի արտադրատեխնոլոգիական խնդիրները: Անասնաբուժական համակարգի, սպասարկող այլ ծառայությունների և անասնաբուժական մթերքներում հումք վերամշակող ձեռնարկությունների ներդաշնակվածությունը ճյուղին:

14. ԱՆԱՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇՈՒԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Կաթի և կաթնամթերքների սննդային և կենսաբանական արժեքները: Կաթի կազմը, ֆիզիկական և քիմիական հատկությունները: Կաթի նախնական մշակումը տնտեսություններում: Անարատ կաթնամթերքների, պաղպաղակի, պանիրների, կարագի և կաթնային պահածոների արտադրության տեխնոլոգիաները: Մսի քիմիական կազմը: Անասունների մորթի տեխնոլոգիան: Մսի նախնական մշակումը: Երշիկների, ապուխտների, կիսաֆաբրիկատների և մսային պահածոների արտադրության տեխնոլոգիաները: Չվի կազմը, նրանից պատրաստված սառեցված և չորացված ձվամթերքների արտադրության տեխնոլոգիան: Կաշիների ստացման տեխնոլոգիան: Կաշիների դասակարգումը: Կաշիների ներկրման գործընթացները: Կաշիների դաբաղումը, պիկելումը: Թավշակաշվի և մորթիների ստացման արտադրական գործընթացները:

15. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ 2 ԿՐԵԴԻՏ 60 ԺԱՄ

Գյուղատնտեսական մեքենաների նշանակությունը և դասակարգումը:

Հողամշակման մեքենաներ, նշանակությունը, տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները: Ցանքի ու տունկի մեքենաներ, նշանակությունը, տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները: Պարարտացման մեքենաներ, նշանակությունը, տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները: Բույսերի պաշտպանության մեքենաներ, նրանց տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները: Կերերի հավաքման, վերամշակման մեքենաներ, տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները: Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի և բերքի վերամշակման, պահպանման մեքենաներ, տեսակները: Արմատապալարապտուղների բերքահավաքի մեքենաներ, տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները:

Հողերի բարելավման և մելիորացման մեքենաներ, տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները: Փոքրաչափ գյուղատնտեսական տեխնիկա, տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները:

ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ

ԲՈՒՀԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

1. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԿՈՆՈՄԻԿԱ
 2. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
 3. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
 4. ՀՀ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ
 5. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ
 6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 7. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ
 8. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԲԱՆԿԵՐՈՒՄ
 9. ԱՌԴԻՏ
 10. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
 11. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
 12. ԷԿՈՆՈՄԻԿԱ-ՄԱԹԵՍԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ
-

13. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ ԵՎ ՊԼԱՆՎՈՐՈՒՄ

14. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԷԿՈՆՈՄԻԿԱ

15. ՄԱՐՔԵԹԻՆԳ

16. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ

1. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԿՈՆՈՄԻԿԱ 4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ

Տնտեսական օրենքների դրսևորման բնույթը գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսության արտադրական ռեսուրսների (հողի, ջրի, կապիտալի, աշխատանքի) գնահատման պահանջի և տնտեսական արդյունավետության որոշման մեթոդաբանությունը, ցուցանիշները: Կապիտալի պտույտը և շրջապտույտի փուլերի գնահատումը: Կապիտալ ներդրումների պահանջի և ներդրման արդյունավետության գնահատումը, նվազագույն ռեսուրսների և տարբերակների ընտրությունը: Գյուղատնտեսության ընդլայնված վերարտադրությունը՝ առանձնահատկությունները, աղբյուրները, ցուցանիշները, տիպերը: Ինտենսիվացումը որպես վերարտադրության ձև՝ ներկա փուլի առանձնահատկությունները: Ինտենսիվության և ինտենսիվացման տնտեսական արդյունավետության որոշման մեթոդիկան, ցուցանիշների համակարգը: Գյուղատնտեսության համախառն և ապրանքային արտադրանքը, վերջնական արդյունքը: Համախառն արդյունքի բաշխումը: Պարենային ազգային անվտանգություն: Արտադրության տնտեսական արդյունավետության էությունը, մակարդակները, ցուցանիշները, կանոնական և իրական տնտեսության պայմաններում: Ինքնարժեք՝ տեսակների հաշվարկման մեթոդաբանությունը, արտերկրների փորձը, իջեցման հիմնախնդիրները: Աշխատանքի արտադրողականության հաշվարկման մեթոդաբանությունը, մակարդակը, դինամիկան և ցուցանիշները: Ռեսուրսների ամբողջական արտադրողականություն: «Նվազող հատույց» և «Սահմանային օգտակարություն»: Համախառն և զուտ եկամուտ, շահույթ, եկամտաբերություն և շահութաբերություն: Ռեսուրսների ամբողջական արդյունավետություն: Արտադրողական ուժերի և արտադրանքների տեղաբաշխման ու մասնագիտացման գիտական հիմունքները, ցուցանիշների համակարգը գյուղատնտեսության մեջ: Կենտրոնացում, համակենտրոնացում և ագրոարդյունաբերական ինտեգրացիա: Տարածաշրջանների էկոնոմիկա: Գնագոյացումը և ագրարային շուկայի համակարգը: Բուսաբուծական և անասնաբուծական առանձին ճյուղերի էկոնոմիկան (արտադրության զարգացում, տեղաբաշխում մասնագիտացում, ինտենսիվացում, տրնտեսական արդյունավետության բարձրացման հիմնախնդիրներ): SWOT վերլուծություն:

2. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ 5 ԿՐԵԴԻՏ 150 ԺԱՄ

Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման գիտական հիմունքները, սկզբունքներն ու օրինաչափությունները: Գյուղատնտեսական ձեռնարկությունների (տնտեսավարման առկա բոլոր ձևերի) կազմակերպա-տնտեսական հիմունքները: Ռեսուրսային ներուժի (հողի, արտադրամիջոցների, աշխատուժի) ձևավորումը և ռացիոնալ օգտագործման կազմակերպումը: Գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրության (տնտեսության վարման համակարգ, ներտնտեսային կանխատեսում և պլանավորում, մասնագիտացում, ճյուղերի ռացիոնալ զուգակցում, արտադրության համակենտրոնացում, ձեռնարկությունների և ստորաբաժանումների չափեր, տնտեսական հաշվարկ շուկայի պայմաններում և աշխատողների նյութական խթանում) ռացիոնալ կազմակերպումը: Բուսաբուծական ու անասնաբուծական ճյուղերի և օժանդակ արդյունաբերական արտադրության կազմակերպումը: Գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրատնտեսական կապերն ագրոպարենային համակարգի մյուս ոլորտի (գյուղատնտեսական հումք վերամշակող, նյութատեխնիկական միջոցներ ապահովող, սպասարկումներ կազմակերպող) ձեռնարկությունների (կազմա-

կերպությունների) հետ:

3. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՍՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 5 ԿՐԵԴԻՏ 150 ԺԱՄ

Գյուղատնտեսության կառավարման էությունը, հասկացությունը, օրինաչափությունները, սկզբունքները, կազմակերպության ներքին ու արտաքին միջավայրը, կառավարման համակարգի հասկացությունը և այլն: Կառավարման նպատակները, դրանց ընտրությունը, հստակ առաքելության սահմանումը: Նպատակների նվաճման գործում իրականացվող ֆունկցիաները (գործառնությունները)՝ ռազմավարական պլանավորում, նրա տիպերը և իրացումը, շարժառիթի դերը պահանջմունքների և վարձահատույցի կազմակերպման գործում: Կառավարչական որոշումների ընդունման, վերահսկողության և հաղորդակցման կազմակերպման հարցերը: Կատարողների վրա ներգործության մեթոդները՝ տնտեսական, կազմակերպակարգարական և սոցիալ-հոգեբանական: Կառավարման կադրերին՝ նրանց ընտրության, գնահատման, տեղաբաշխման, դաստիարակման, ռեզերվի պատրաստման, աշխատանքի կազմակերպման ու նորմավորման հարցերին: Կազմակերպության գործունեության արդյունավետության ապահովումն է հակամարտությունների ռիսկի, գիտատեխնիկական առաջադիմության, աշխատանքի և արտադրանքի որակի, մատակարարման և իրացման կառավարման հարցերին և այլն:

4. ՀՀ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ 2 ԿՐԵԴԻՏ 60 ԺԱՄ

Արտադրողական ուժերի էությունը, սոցիալ-տնտեսական բնույթը, նրա կազմը, կառուցվածքը, տեղաբաշխման ուժեղ և թույլ կողմերը տարածության և ժամանակի մեջ, տեղաբաշխման օրինաչափություններն ու առանձնահատկությունը, սահմաններն ու ներքին կապերը: Ռեսուրսների պաշարների և վիճակի գնահատումը: Հաղորդակցման ուղիների նպաստավորությունը, անվտանգությունը, ծախսատարությունը, այլընտրանքը, միջազգային տնտեսական կապերը: Ագրարային և մյուս ոլորտների բնական և արտադրողական ռեսուրսների տեղաբաշխումը:

5. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9 ԿՐԵԴԻՏ 270 ԺԱՄ

Վիճակագրության ընդհանուր տեսություն:

Վիճակագրության ընդհանուր տեսության առարկան, մեթոդը, խնդիրները: Վիճակագրական չափորոշիչները, վիճակագրական տվյալների դիտարկման, ամփոփման և խմբավորման մեթոդաբանությունը: Միջին և վարիացիայի ցուցանիշների փոխկապակցությունների և դինամիկայի վերլուծությունը:

Սոցիալ տնտեսական վիճակագրություն:

Գների, ֆինանսների և բանկերի, արտադրության և շրջանառության ծախքերի վիճակագրություն: Ազգային հաշիվների համակարգի վիճակագրություն: Մակրոտնտեսական ցուցանիշների վիճակագրություն: Վճարային և առևտրային հաշվեկշիռների, ապրանքաշրջանառության (մեծածախ, մանրածախ, համախառն և գուտ) վիճակագրություն:

6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5 ԿՐԵԴԻՏ 150 ԺԱՄ

Առարկայի բնորոշումը, մեթոդները, խնդիրները և զարգացման փուլերը, դերը երկրի տնտեսական զարգացման գործում: Աշխատանքի միջազգային բաժանում, զարգացման փուլերը, բնութագրող ցուցանիշները: Արտադրության միջազգային մասնագիտացում և կոոպերացում: Միջազգային առևտրի ձևերը, տեսությունները, առանձնահատկությունները տարբեր երկրներում: Միջազգային առևտրի անհամաչափ զարգացումը: Համաշխարհային շուկա, գների համակարգը: Տեխնոլոգիաների, ծառայությունների միջազգային առևտուր, դրանց կառուցվածքը, կարգավորումը: Ազատ տնտեսական գոտիների բնութագիրը և

կազմակերպման անհրաժեշտությունը: Միջազգային տնտեսական գործարքների տեսակները և բովանդակությունը: Առևտրային տերմինները: Միջազգային արժույթային հարաբերություններ, արժույթային համակարգեր: Կապիտալի արտահանում, միջազգային հաշվարկներ: Ֆինանսավարկային միջազգային կազմակերպություններ: Տնտեսական ինտեգրացիա, զարգացման փուլերը և ձևերը, տնտեսական համագործակցության անհրաժեշտությունը: Աշխատուժի միջազգային միգրացիա, պատճառները, կարգավորումը: Հայաստանի միջազգային տնտեսական հարաբերություններ, հիմնական խնդիրները, հետագա զարգացումը: Հայաստանի ինտեգրացումը միջազգային կառույցներում:

7. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ 7 ԿՐԵԴԻՏ 210 ԺԱՄ

Հաշվապահական հաշվառման պատմական զարգացումը, էությունը, նպատակներն ու բովանդակությունը: Հաշվապահական հաշվառման խնդիրները, ֆունկցիաները, օրենսդրական և նորմատիվային կարգավորումը: Հաշվապահության տեղեկատվության դերը, նրան ներկայացվող պահանջները և օգտագործողները: Հաշվառման հիմնադրույթները և սկզբունքները, ուսումնասիրության օբյեկտները: Ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների դասակարգումը, գնահատումը և հաշվառման հիմնախնդիրները: Պաշարների դասակարգումը և գնահատումը: Մատղաշ և բավոլ կենդանիների, դրամական միջոցների և դեբիտորական պարտքերի հաշվառման առանձնահատկությունները: Կապիտալի, պահուստների, պարտավորությունների հաշվառման հիմնական սկզբունքները և կանոնները գյուղատնտեսության ոլորտի ձեռնարկություններում և ֆերմերային տնտեսություններում: Հաշվեկշռային ընդհանրացում, հաշվեկշռային նույնություն, հաշվեկշռային փոփոխություններ: Հաշվետարության կազմակերպման ծրագրավորում, փաստաթղթավորում, փաստաթղթաշրջանառություն, գույքագրում, արժեքային չափումներ և գնահատում: Հաշվապահական հաշիվ, հաշիվների դասակարգում, հաշիվների պլան, կրկնակի գրանցում, սինթետիկ և վերլուծական հաշվառում: Հիմնական տնտեսական գործընթացների բնութագրումը և փոխադարձ կապը: Հաշվառման ռեզիստիվներ, հաշվառման ձևեր, վերահսկման և աուդիտորական ընթացակարգեր: Մասնագիտության վարքագիծ, ազգային և միջազգային հաշվապահական կազմակերպություններ և հաշվապահական հաշվառման չափանիշներ: Հաշվապահական հաշվառման օղակները, ֆինանսական և կառավարչական հաշվառում, ֆինանսական հաշվառման նշանակությունը, աշխատանքների կազմակերպման սկզբունքները և խնդիրները ագրոպարենային համակարգում: Ֆինանսական հաշվետվություններ, կազմման սկզբունքները գյուղատնտեսության մեջ: Հաշվեկշիռը որպես ձեռնարկության ֆինանսական դրությունը ներկայացնող ամփոփում: Հաշվեկշռի առանձին հատվածների և հողվածների բովանդակությունը, դրանց կապը: Ֆինանսական արդյունքների հաշվետվության կազմումը ագրոպարենային համակարգում, ծախսերի և եկամուտների համադրումը: Ոչ ընթացիկ ակտիվների դասակարգումը, գնահատումը: Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվառման հիմնախնդիրները գյուղատնտեսության ոլորտում: Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքը, հաշվարկման մեթոդների կիրառումը ագրոպարենային համակարգում: Ընթացիկ ակտիվների բնութագիրը, հաշվառման հիմնախնդիրները, պաշարների խմբերը գյուղատնտեսության մեջ, հաշվառման կազմակերպումը ՀՀՀՀՍ 2-րդ չափորոշիչի: Աճեցվող և բավոլ կենդանիները որպես պաշարների յուրահատուկ խումբ, գնահատումը, սկզբնական և հաշվապահական հաշվառման կազմակերպումը: Դրամական միջոցների և դեբիտորական պարտքերի հաշվառման կազմակերպումը գյուղացիական ֆերմերային տնտեսություններում: Դրամական միջոցների սկզբնական և հաշվապահական հաշվառումը, բանկային հաշիվներում և ձեռնարկության դրամարկղում: Դրամական միջոցների հոսքերի հաշվետվություն, կառուցվածքը, դրամական հոսքեր գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեությունից: Ֆինանսական և կառավարչական հաշվառման հիմնական առանձնահատկությունները: Կապիտալի պահուստների բնութագրումը գյուղատնտեսության մեջ և հաշվառման հիմնադրույթները: Գյուղատնտեսական ձեռնարկությունների ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորությունները, հաշվառման սկզբունքները: Դրամական միջոցների հոսքերի հաշվետվությունը, կառուցվածքը, բովանդակությունը: Կապիտալի շարժի հաշվետվություն, կառուցվածքը, բովանդակությունը: Կառավարչական հաշվառման կազմակերպումը գյուղատնտեսության մեջ: Կառավարչական վերահսկողության էությունը և փուլերը: Ծախսերի դասակարգումը, ուղղակի և անուղղակի, հիմնական և վերադիր, հաստատուն և փոփոխական ծախսերը: Պաշարների հաշվառման հիմնական սկզբունքները ԱՊՀ-ում: Աշխատանքի և աշխատավարձի հաշվառման կազմակերպումը գյուղատնտեսական ձեռնարկություններում: Անուղղակի ծախսերի բաշխումը, ծախսային կենտրոններ, ծախսերի կլանում: Արտադրանքի ինքնարժեքի հաշվարկման հիմնական

սկզբունքները գյուղատնտեսության մեջ, հիմնական, երկրորդական արտադրանքների ինքնարժեքի հաշվարկումը: Հաշվառման կազմակերպումը ինտեգրված և ոչ ինտեգրված մեթոդով: Շահույթի կազմի և կառուցվածքի վերլուծությունը:

8. ՀԱՇՎԱՎԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԲԱՆԿԵՐՈՒՄ 4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ

Հաշվապահական հաշվառման առանձնահատկությունները բանկերում, հաշվառումը կարգավորող իրավական ակտերը: Հաշվապահական հաշվառումը վարելու և հաշվետվությունները կազմելու հիմնական սկզբունքները: Ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները: Ակտիվների դասակարգումն ըստ բնույթի և իրացվելիության: կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր: Թղթակցային հաշիվներ: Պահանջներ այլ բանկերի և ֆինանսական հաստատությունների նկատմամբ: Պարտավորությունների հաշվառումը: ՀՀՀՀՄ 16 «Հիմնական միջոցներ»: Հիմնական միջոցների բնութագրումը, սկզբնական արժեքը, հաշվեկշռային արժեքը, մնացորդային արժեքը, օգտակար ծառայությունը: Հիմնական միջոցների ճանաչումը և չափումը, դասակարգումը: Հիմնական միջոցների մաշվածության հաշվառումը, եղանակները: Հիմնական միջոցների վերագնահատումը: Հիմնական միջոցների դուրսգրման և իրացման հաշվառումը: Արժեթղթերը, դրանց տեսակները, դասակարգումը: Պարտավորությունների բնութագրումը, դասակարգումը վերլուծական և սինթետիկ հաշվառումը: Հաճախորդներից ներգարվված ցպահանջ և ժամկետային պարտավորությունների հաշվառումը: Տոկոսային եկամուտներ, առաջացման աղբյուրները, հաշվառումը:

9. ԱՌԴԻՏ 4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ

Աուդիտի էությունը և նշանակությունը, նպատակները և անհրաժեշտությունը: Աուդիտի պատմական զարգացումը, փուլերը: Աուդիտորական ստանդարտները և նրանցում ներկայացված օրինագծերը: Աուդիտի և հաշվապահական հաշվառման միջև եղած կապը: Աուդիտորական եզրակացության նշանակությունը: «Ճշմարիտ է և իրական» արտահայտության էությունը: Էականությունը որպես աուդիտի անցկացման կարևորագույն սկզբունք: Աուդիտորի իրավունքներն ու պարտականությունները: Աուդիտի աշխատանքի նշանակումը և հրաժարումը: Աուդիտի պրոֆեսիոնալ վարքագծի կանոնները: Հիմնական սկզբունքները, ամբողջականությունը, օբյեկտիվությունը և անկախությունը, գաղտնիության հիմնական սկզբունքները: Աուդիտորական ռիսկ և ռիսկայնության գործոններ: Խարդախություն և սխալներ: Արտաքին աուդիտի էությունը և նշանակությունը: Աուդիտի պլանավորումը: Աշխատանքային պլան գրաֆիկների կազմում, աշխատաժամանակի որոշում, ռիսկերի գնահատում: Փորձագետների ներգրավման անհրաժեշտությունը: Աուդիտորական եզրակացություն: Աուդիտորական ստուգման մեթոդները: Աուդիտորական ապացույցներ: Ներքին աուդիտի էությունը և նշանակությունը: Ներքին և արտաքին աուդիտի միջև եղած տարբերությունները: Ներքին աուդիտի գործողության ոլորտները: Ներքին աուդիտի եզրակացության տեսակները: Ոչ ընթացիկ նյութական ակտիվների երկարաժամկետ ներդրումների աուդիտի անցկացման ընթացակարգերը: Վարձակալված հիմնական միջոցների աուդիտ: Փաստաթղթավորման պատասխանատուները: Պաշարների աուդիտ: Անավարտ արտադրության աուդիտ: Պաշարների գույքագրման կազմակերպումը: Պաշարների գնահատման ընթացակարգերը: Պաշարների աուդիտի արդյունքների ամփոփումը: Դեբիտորական պարտքերի աուդիտի ընթացակարգերը: Դրամական միջոցների աուդիտ: Դրամարկղային գործառնությունների աուդիտի իրականացման ընթացակարգերը: Դրամական միջոցների աուդիտը բանկային հաշիվներում: Դրամական միջոցների հաշվառումը և աուդիտը ապահովող փաստաթղթերը: Դրամական միջոցների ներքին վերահսկողության նշանակությունը և նպատակները: Բանկային քաղվածքների ստուգում: Գնման պատվեր, իրացման պատվեր: Գնումների և կրեդիտորական պարտքերի վերահսկողության ընթացակարգեր: Իրացում և դեբիտորական պարտքերի վերահսկողության ընթացակարգեր: Աշխատանքի վարձատրության աուդիտի անցկացման նպատակները, ընթացակարգերը և նշանակությունը: Դեբիտորական պարտքեր աշխատանք

քի վարձատրության գծով: Կրեդիտորական պարտքեր աշխատանքի վարձատրության գծով: Աշխատավարձի հաշվառման փաստաթղթավորման աուդիտ: Հաշվետու անձերի հետ կապված գործառնությունների արտացոլման ստուգումը: Արտադրական ստորաբաժանումներում աուդիտի կազմակերպում: Հիմնական արտադրության աուդիտի կազմակերպում: Բյուջեի հետ պարտավորությունների գծով հաշվարկների աուդիտի կազմակերպումը: Սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության գծով պարտավորությունների աուդիտի կազմակերպումը: Պահուստները, որպես զուտ ակտիվների մնացորդներ: Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումից առաջացած պահուստը: Վերագնահատումից ավելացում և վերագնահատումից նվազեցում: Առևտրային կրեդիտորական պարտքերի, այլ կրեդիտորական պարտքերի, հաշվեգրված պարտավորությունների աուդիտ: Ներքին վերահսկողության ընթացակարգերը: Մնացորդների ստուգումը և ժամկետային վերլուծությունները, բանկային վարկերի աուդիտ: Փոխառություններ: Կրեդիտորական պարտքերի հաշվառման հիմնական փաստաթղթերի առկայության, ժամկետների և ճշտության ստուգում: Ֆինանսական հաշվետվությունների տեսակները և աուդիտը: Աուդիտորական վերլուծություններ: Աուդիտորական եզրակացության պատրաստում: Ներքին աուդիտի եզրակացությունը և օգտվող խմբերը:

10. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 5 ԿՐԵԴԻՏ 150 ԺԱՄ

Ագրարային համակարգի ձեռնարկությունների ֆինանսա-տնտեսական գործունեության վերլուծության նպատակը, խնդիրները, համալիր վերլուծության մեթոդիկան, հողային ռեսուրսների օգտագործումը, կերային և պարենային մշակաբույսերի տնտեսական արդյունավետությունը, ընթացիկ ակտիվների ապահովվածությունը, օգտագործումը, աշխատանքային ռեսուրսներով ապահովվածությունը, աշխատուժի շարժը, աշխատանքի արտադրողականությունը և արտադրանքի աշխատատարության վրա տարբեր գործոնների ազդեցությունը, աշխատավարձի ֆոնդի վերլուծությունը: Գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրանքների գծով առաջադրանքների կատարումը, արտադրության ծավալների բարձրացումը ապահովող գործոնների վերլուծությունը: Օժանդակ և սպասարկող արտադրանքների աշխատանքների վերլուծությունը: Միավոր և համախառն բուսաբուծական և անասնաբուծական արտադրանքների հաշվով կատարված ծախսերի և նրա կառուցվածքի գծով տեղի ունեցած փոփոխությունները: Ներդրումների տնտեսական արդյունավետությունը, ֆինանսական արդյունքների վերլուծությունը (ըստ արտադրանքների, ճյուղերի և տնտեսության առումով շահույթի և շահութաբերության մակարդակի շարժընթացը, նրանց փոփոխությունները և պայմանավորող գործոնների), համախառն և զուտ եկամտի հաշվարկման և բաշխման վերլուծությունը: Սեփական և փոխառու կապիտալի հարաբերակցության ապահովումը, ֆինանսատնտեսական գործունեության համալիր գնահատումը ըստ հիմնական ցուցանիշների:

11. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Աշխատանքը որպես հասարակականորեն օգտակար գործունեություն: Աշխատանքի շուկան շուկայական տնտեսության համակարգում: Աշխատանքային ռեսուրսներ, զբաղվածություն, աշխատանքի բաժանում և կոոպերացիա: Աշխատանքի արտադրողականություն և արդյունավետություն: Աշխատանքի պայմաններ, աշխատանքի և հանգստի ռեժիմ, աշխատանքային գործընթացների կազմակերպում: Աշխատանքի նորմավորում, եկամտոտներ և աշխատանքի վարձատրություն: Սոցիալական զարգացում և կենսամակարդակ: Աշխատանքի կառավարում շուկայական հարաբերությունների համակարգում:

12. ԷԿՈՆՈՄԻԿԱ-ՍԱԹԵՍԱՏԻԿԱԿԱՆ ՍՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ 5 ԿՐԵԴԻՏ 150 ԺԱՄ

Գասընթացի առարկան, խնդիրները և նպատակը: մոդելավորմուն հիմնական ուղղությունները: Գծային ծրագրավորման հիմնական խնդիրը (ԳԾԽ), նրա ստանդարտ և կանոնական ձևերը: Գծային ծրագրավորմանը բերվող խնդիրների օրինակներ: ԳԾԽ-ի լուծման երկրաչափական և սիմպլեքս եղանակները: Երկակի խնդիրների կազմումը, նրանց տնտեսագիտական մեկնաբանությունները: Գծային ծրագրավորման տրանսպորտային խնդրի ձևակերպումը և լուծման մեթոդները: Ոչ գծային ծրագրավորման խնդիրների օրինակներ: Արտադրական ֆունկցիաներ, նրանց տեսակները: Էկոնոմիկո-մաթեմատիկական մոդելների դասակարգումը, օպտիմալության չափանիշի ընտրությունը, փոփոխականների և սահմանափակումների համակարգը: Էկոնոմիկո-մաթեմատիկական մոդելավորումը անասնաբուծության մեջ: Կերային ռացիոնի, հոտի օպտիմալ կազմի որոշման, կերերի օպտիմալ օգտագործման խնդիրների մոդելավորումը: Տնտեսագիտական պրոցեսների մոդելավորումը բուսաբուծության մեջ: Ցանքատարածությունների օպտիմալ կառուցվածքի, ցանքաշրջանառության օպտիմալ տարբերակի որոշման խնդիրների մաթեմատիկական մոդելների մշակումը: Արտադրության օպտիմալ մասնագիտացման և տեղաբաշխման խնդրի մոդելավորումը: Մեքենա-տրակտորային հավաքակալայանի օպտիմալ կազմի որոշման, օպտիմալ համալրման և օպտիմալ օգտագործման խնդիրների առանձնահատկությունները և մոդելավորումը:

13. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Կանխատեսում և պլանավորում առարկայի էությունը և խնդիրները: Կանխատեսման և պլանավորման մեթոդաբանական հիմունքները: Կանխատեսման էությունը և դասակարգումը: Կանխատեսման և պլանավորման հիմնական մեթոդները: Մոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի ու պլանների համակարգը և դրանց կառուցվածքը: Ռեզոնանսային պլանավորում: Բիզնես-պլանի էությունը, կառուցվածքը և մշակման կարգը: Գիտատեխնիկական առաջադիմության կանխատեսումը և պլանավորումը: ԱԱՀ-ի ռեզիոնալ և մթերային ենթահամալիրների և գյուղատնտեսության վարման համակարգերի, ենթակառուցվածքների, վերամշակող արդյունաբերության ու առևտրի, փոխադրումների զարգացման կանխատեսումը և պլանավորումը: Ինվեստիցիաների և սոցիալական զարգացման կանխատեսումը և պլանավորումը: Գնագոյացման և շահույթի պետական կարգավորումը:

14. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԷԿՈՆՈՄԻԿԱ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Աշխատանքը որպես հասարակության կենսագործունեության հիմք: Աշխատանքի առանձնահատկությունը: Պահանջարկն աշխատանքի նկատմամբ: Պահանջները աշխատանքի տարբեր տեսակների նկատմամբ:

Աշխատանքի շուկայի գործոնները, աշխատանքի մրցակցային շուկա, մենաշնորհը և մոնոպոստիան աշխատանքի շուկայում:

Նվազագույն աշխատավարձ հասկացությունը:

Աշխատանքի ոչ հավասարակշռված շուկա:

Մարդկային կապիտալ, մասնագետների աշխատանքի շուկան:

Մարդկային կապիտալի վերարտադրությունը կյանքի ցիկլի ընթացքում:

Աշխատանքի պաշտպանության գծով նորմատիվների ազդեցությունը աշխատանքի շուկայի վրա, շուկայի անկատարությունը և աշխատավարձի տարբերությունները:

Աշխատանքի ներքին շուկաները, արտադրողականություն և վարձատրություն, արդյունավետ աշխատավարձը և հոսունության վնասները:

Կայունությունը աշխատանքի շուկայում, կայունության տեսակները, ախատանքի շուկայի երկակիությունը և սեզոնականությունը:

Արհմիությունների պահվածքի նպատակները և մոդելները:

Գործազրկություն, տեսակները և ցուցանիշները:

Սոցիալական գործընկերություն: Սոցիալ աշխատանքային հարաբերությունների կարգավորման միջազգային ստանդարտները և ԱՄԿ դերը:

15. ՄԱՐՔԵԹԻՆԳ 4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ

Առարկան ուսումնասիրում է խնդիրները, սկզբունքները, ֆունկցիաներն ու հիմնադրույթները, մարքեթինգի տեղն ու դերը շուկայական տնտեսությունում, մասնավորապես, բանկային համակարգում, մակրո և միկրո միջավայրերը, մարքեթինգային հետազոտությունների համակարգը, մարքեթինգային ռազմավարությունը, սպառողների վարքի ուսումնասիրումը՝ որպես մարքեթինգային հնարավորությունների բացահայտման հիմնադրյուր: Առանձին տեղ կհատկացվի շուկայի հատվածավորմանը, ուսումնասիրությանը՝ որպես մարքեթինգային հնարավորությունների ընդլայնում, ինչպես նաև ապրանքային, գնային, իրացման և կոմունիկացիոն քաղաքականության մշակմանն ու կիրառմանը:

16. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Հասկացողություն անշարժ գույքի և անշարժ գույքի կադաստրի մասին: Անշարժ գույքի կադաստր առարկայի նպատակը, խնդիրները և սկզբունքները: Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ: Անշարժ գույքի գնահատման էությունն ու բովանդակությունը: Տարածագնահատման գոտիականություն: Շենքերի և շինությունների կադաստրային գնահատումը: Անշարժ գույքի նկատմամբ գործող հարկատեսակները: Գույքահարկ: Հողամասերի գնահատման մեթոդաբանությունը և դրա առանձնահատկությունները: Հողի հարկի բազայի ձևավորման համակարգը: Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը և ուսումնասիրության մեթոդիկան: Անշարժ գույքի ուսումնասիրության հիմնական սկզբունքները: Անշարժ գույքի շուկայի զարգացման կանխատեսում: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման իրականացումը, խնդիրներն ու սկզբունքները: Անշարժ գույքի պետական գրանցման համակարգի հիմնական փաստաթղթերը: Պետական և համայնքային սեփականություն հաղիսացող հողերի կառավարումը: Անշարժ գույքի գնահատման գործունեության կազմակերպումը և իրականացումը: Անշարժ գույքի շուկայական արժեք և գին: Անշարժ գույքի գնահատման մեթոդները: Հողամասերի գնահատման առանձնահատկությունները: Անշարժ գույքի գնահատման և փորձաքննության ժամանակ անշարժ գույքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, մշակումը և վերլուծությունը: Ծախսային մեթոդով անշարժ գույքի շուկայական արժեքի որոշումը: Անշարժ գույքի ֆիզիկական, ֆունկցիոնալ և տնտեսական մաշվածության որոշումը: Եկամտային մեթոդով անշարժ գույքի շուկայական արժեքի որոշումը: Կապիտալավերածման գործակից: Համեմատական մեթոդով անշարժ գույքի շուկայական արժեքի որոշումը: Անշարժ գույքի գնահատումը շուկայի ռիսկայնության գործոնի հաշվառմամբ:

ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

- ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ*
- ԲՈՒՀԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ*
1. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
 2. ԴՐԱՍԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐԿԵՐ ԵՎ ԲԱՆԿԵՐ
 3. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍՆԵՐ
 4. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ
 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ
 6. ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՍՏԱԿԱՐԳ
 7. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱ ԵՎ ԲՈՐՍԱՅԻՆ ԳՈՐԾ
-

8. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

9. ԻՆՎԵՍՏԻՑԻԱՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

10. ԲԱՆԿԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ

11. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

12. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

13. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

14. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՈՄԵՐՑԻԱ

15. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 5 ԿՐԵԴԻՏ 150 ԺԱՄ

Ֆինանսի էությունը և գործառույթները, նրանց դերը շուկայական տնտեսության դրամային հարաբերությունների համակարգում: Հասարակական վերարտադրությունում ֆինանսների օգտագործման հիմունքները: Ֆինանսական քաղաքականությունը: Ֆինանսների կառավարում: Ֆինանսների ծրագրավորում և կանխատեսում, ֆինանսական վերահսկողություն: Երկրի ֆինանսական համակարգը, նրա ոլորտը և օղակները, գործունեության տարբեր ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների ֆինանսների կազմակերպման սկզբունքները: Առևտրային կազմակերպությունների ֆինանսների ֆունկցիոնալ (գործառույթային) հիմունքները, և ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսները: Ֆինանսական հարաբերությունների պետական կարգավորումը շուկայական տնտեսությունում: Բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսների ձևավորման առանձնահատկությունները: Ապահովագրությունը որպես ֆինանսական կատեգորիա, նրա բնորոշ գծերը, ոլորտները (կենսաթոշակային, բժշկական և այլն), ապահովագրական ձևերը և դրանց առանձնահատկությունները: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսները, դրանց ազդեցությունը կառավարման մակարդակների և գործառույթների կազմակերպման վրա: Երկրի բյուջետային համակարգը, նրա կառուցման մոդելները, բյուջետային գործընթաց և բյուջետային կառույցներ: Պետական և տեղական ինքնակառավարման վարկ: Արտաբյուջետային հիմնադրամներ: Ֆինանսների ներգործումը տնտեսական և սոցիալական ոլորտներում: Շուկայական հարաբերությունների հետագա զարգացման պայմաններում ֆինանսական լծակների և խթանների ազդեցության ավելացումն ու դրանց արդյունավետության բարձրացման ուղիները: Ֆինանսների դերը միջազգային համագործակցության զարգացման գործում, ֆինանսները և տնտեսության գլոբալիզացիան: Տնտեսապես զարգացած երկրներում ֆինանսական համակարգերի գործառնության առանձնահատկությունները:

2. ԴՐԱՄԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐԿԵՐ ԵՎ ԲԱՆԿԵՐ 6 ԿՐԵԴԻՏ 180 ԺԱՄ

Փողը որպես տնտեսական հասկացություն, փողի ծագումը: Արժեձևերի զարգացումը, փողը որպես ընդհանրական արժեձև, դրամական ապրանքի (ապրանքային փողի) աստիճանական զարգացումը և փողի ֆունկցիոնալ ձևերը: Փողի անհրաժեշտությունը շուկայական էկոնոմիկային անցնելու պայմաններում: Ապրանքային արտադրությունը որպես հիմք փողի գոյության համար: Ոսկին որպես ընդհանրական համարժեք, որպես ապրանքային փող: Փողը որպես անմիջական փոխանակման գանձերի կուտակման և եկամտի չափման միջոց: Փողի մետաղային տեսությունը, այդ տեսության զարգացման պատճառները: Մետաղային տեսության էվոլյուցիան (աստիճանական զարգացումը) 18-19-րդ դարերում: Նոր մետաղային տեսությունը (նեոմետալիզմ), նրա առանձնահատկությունները: Փողի քանակական տեսությունը, նրա ծագման պատճառները և աստիճանական զարգացումը: Թղթադրամների առաջացման օբյեկտիվ անհրաժեշտությունը, հնարավորությունները և դրանց շրջանառության օրինաչափությունները: Թղթադրամը որպես արժեքի լավարտում ձև: Թղթադրամի թողարկումը հարկադիր կուրսով պետական բյուջեի ծախսերը ծածկելու համար: Թղթադրամի ար-

ժեզրկման հասկացությունը, դրա պատճառները: Թղթադրամի էմիսիոն եկամուտը: Վարկադրամները, նրանց անհրաժեշտությունը, տեսակները (մուրհակներ, չեկեր, բանկնոտներ): Մուրհակի էությունը և տեսակները: Բանկային տոմսերի էությունը, չեկերի օգտագործման ձևերը: Առևտրային մուրհակները և բանկնոտների ապահովվածության ձևերը: Բանկնոտների ապահովվածության և էմիսիայի հարցերը տնտեսագիտության մեջ: Դրամական համակարգի հասկացությունը, նրա տարրերը, դրամական միավորի անվանումը, գների մասշտաբը, փողի տեսակները: Ֆինանսական գլխավոր օղակը, որն իրականացնում է դրամաշրջանառության կարգավորումը: Դրամաշրջանառության բնութագրումը և կազմակերպման առանձնահատկությունները: Կանխիկ և անկանխիկ դրամի շրջապտույտի կապը և տարբերությունները: Դրամաշրջանառության կազմակերպման սկզբունքները և կառավարման կարգը: Շրջանառության մեջ դրամը բաց թողնելու և շրջանառությունից դուրս հանելու ուղիները: Դրամական համակարգի հիմնական տեսակները և դրանց դասակարգումը: Միամետաղյա (մոնոմետալիզմ) և երկմետաղյա (բիմետալիզմ) դրամական համակարգերը, դրանց տարատեսակներն ու դերը զարգացման գործում: Արտերկրների դրամական համակարգը: Հայաստանի դրամական համակարգի առանձնահատկությունները մինչև 1-ին համաշխարհային պարտերազմը և դրանից հետո: 1922-24թթ. և 1947թ. դրամական ռեֆորմները: 1961թ. գների մասշտաբի փոփոխությունը: ՀՀ դրամական համակարգի առանձնահատկությունները անկախացումից հետո: 1993թ. դրամական ռեֆորմը և նոր դրամական համակարգի ստեղծումը: ՀՀ ԿԲ-ի դերը դրամաշրջանառության կազմակերպման գործում: Կանխիկ դրամաշրջանառության բնութագրումը, նրա կառուցվածքը: Դրամի ֆունկցիոնալ ձևերի փոփոխությունները: Դրամաշրջանառության կազմակերպման առանձնահատկությունները շուկայական էկոնոմիկայի պայմաններում: Շրջանառության համար անհրաժեշտ կանխիկ դրամի պահանջարկը որոշող գործոնները: Դրամաշրջանառության տնտեսական օրենքը: Դրամաշրջանառության համար անհրաժեշտ դրամի քանակի որոշման խնդիրները: Դրամական զանգվածի դրամական բազային սահմանումը: Դրամաշրջանառության կարգավորումը Կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից: Անկանխիկ հաշվարկների բնութագրումը և դրա տարրերը: Անկանխիկ հաշվարկների կազմակերպման սկզբունքները, վճարման հերթականությունը: Անկանխիկ հաշվարկների ձևերը: Հաշվարկների բացման կարգը՝ հաշվարկային, ընթացիկ և թղթակցային հաշիվները: Հաշվարկային փաստաթղթերը, դրանց շրջապտույտը, կարգավորումը որպես փաստաթղթաշրջանառության ձև: Հաշվարկներ հանձնարարագրերով, հաշվարկներ վճարային-պահանջագրերով, չեկերով հաշվարկներ, հաշվարկներ ակրեդիտիվային ձևով, մուրհակային ձևով, ֆակտորինգային ձևով, վարկային քարտերով, պլաստիկ քարտերով և այլ ձևերով: Ինֆլյացիայի էությունը և դրսևորման ձևերը: Ինֆլյացիան որպես սոցիալ-տնտեսական երևույթ: Ինֆլյացիայի պատճառները և որպես դրամաշրջանառության տնտեսական օրենքի խախտման, արտադրության անհամամասնական զարգացման հետևանք: Տնտեսության ռազմականացումը և ինֆլյացիան: Պետության կողմից դրամավարկային քաղաքականության կարգավորումը և ինֆլյացիան: Ինֆլյացիայի ֆինանսական և վարկա-դրամական գործոնները: Ֆինանսական ճրգնաժամերը: Ինֆլյացիայի տարատեսակները: Ինֆլյացիայի վերաբերյալ Ջ. Քեյնսի տեսությունը և նոր քեյնսականները: Ինֆլյացիայի ազդեցությունը վարկատուների և վարկառուների վրա: Ինֆլյացիայի կարգավորման մեթոդները: Դրամական ռեֆորմների հասկացությունը և տեսակները: Դրամաշրջանառության և արտարժույթի (վալյուտայի) կայունացման մեթոդները: Նուեֆիկացիան, դեֆլավացիան և ռեֆլավացիան դրանց առանձնահատկությունները: Արժույթային հարաբերությունների բնութագրումը և տարբեր երկրների միջև դրանց կապը ապրանքային արտադրության, միջազգային առևտրի զարգացման, կապիտալի ու ծառայությունների շարժման հետ: Ազգային, համաշխարհային արժույթային համակարգի հասկացությունը: Արժույթային կուրսը և դրա որոշման եղանակները: Դրամական պարիտետը և արժույթային կուրսը, ոսկու միամետաղյա համակարգի ժամանակ: Արժույթային կուրսի տատանումները բնորոշող գոր-

ծոնները: Արժուքային միջազգային հաշվարկներ: Պետության դերը միջազգային արժուքային հարաբերությունների կարգավորման գործում: Բնակչության վճարային հաշվեկշիռը (սպառողական զամբյուղը), դրա հասկացությունը և հիմնական բաժինները: Հաշվարկային հաշվեկշիռը, նրա տարբերությունը վճարային հաշվեկշիռից: Վճարային հաշվեկշիռի վրա ազդող գործոնները: Վարկի էությունը և անհրաժեշտությունը: Վարկի տեսությունները: Ֆինանսական շուկան և բանկերը վարկային հարաբերությունների ծագման գործում: Վարկի օգտագործման եղանակները և վարկային շուկաների հասկացությունը Վարկային և վարկավորման մեխանիզմների բնութագրումը, որպես ինքնուրույն տնտեսական հասկացություններ: Վարկի կառուցվածքը, վարկի օբյեկտը, սուբյեկտները՝ վարկատուի և վարկառուի բնութագրումը: Տնտեսավարող սուբյեկտի կողմից վարկային միջոցների նկատմամբ պահանջի կրճատման ուղիները: Վարկի փոխադարձ կապը այլ տնտեսական հասկացությունների հետ: Վարկի սկզբունքները, վարկային ռեսուրսների ավելացման ուղիները, դրանց բնութագրումը: Վարկի ֆունկցիաների հասկացությունը և դրանց վերլուծությունը: Վարկի վերաբաշխման ֆունկցիան: Վերաբաշխման օբյեկտները՝ միջնորդային և ներճյուղային վերաբաշխում: Վարկի ձևերը և տեսակների հասկացությունը: Բանկային վարկի դասակարգումը: Բանկային համակարգի վարկային գործունեության բարելավման ուղիները: Վարկի սահմանների հասկացությունը, դրանց տեսակները և փոխադարձ կապը: Վարկային ռեսուրսները և վարկավորման սահմանները (կարճաժամկետ և երկարաժամկետ): Վարկի սահմանների որոշման կարգը: Փոխառուի վարկունակության ու բանկի լուծարելիության հասկացությունը, դրանց օգտագործումը ձեռնարկությունների վարկավորման սահմանների որոշման ժամանակ: Վարկային սահմանափակումները և ընդլայնումը (էքսպանսիա), դրանց կիրառման պայմանները և հետևանքները: Վարկի դերը ընդլայնված վերարտադրության գործընթացում: Վարկի դերի հասկացությունը և դրա կապը վարկի էության հետ: Վարկային ապահովման համակարգի բարելավման ուղիները՝ ըստ վարկային ապահովման բարելավման, պետության դերի և վարկային քաղաքականության կարգավորման, ինվեստիցիոն քաղաքականության: Փոխատվական կապիտալը և վարկը որպես տնտեսական հասկացություն: Փոխատվական կապիտալի գոյացման աղբյուրները: Փոխատվական կապիտալի առանձնահատկությունները: Առևտրային և բանկային վարկերը, դրանց նմանություններն ու տարբերությունները: Սպառողական, գյուղատնտեսական, հիփոթեքային, պետական և միջազգային վարկ: Փոխատվական կապիտալի շուկան, նրա կառուցվածքը և առանձնահատկությունները: Փոխատվական տոկոսի էությունը և ֆունկցիաները: Տոկոսի նորման և նրա վրա ազդող գործոնները: Տոկոսի վճարման ժամանակ ձևավորված սուբյեկտները: Փոխատվական տոկոսի կապը շահույթի և գնի հետ: Փոխատվական տոկոսի օգտագործումը և վճարման աղբյուրները: Տոկոսադրույքների դասակարգումը ըստ արտոնյալ և սահմանային տոկոսադրույքների: Վարկի տոկոսի դերը շուկայի պայմաններում: Փոխատվական տոկոսի ազդեցությունը շահույթի ծավալի և ձեռնարկությունների ինքնաֆինանսավորման վրա: Բանկերի իրավունքները տոկոսադրույքների ձևավորման գործում: Փոխատվական տոկոսի էությունը և նշանակությունը արդի պայմաններում: Միջազգային վարկի էությունը և ձևերի դասակարգումը: Վարկի ձևերը՝ ֆիրմային, բանկային, բրոքերային, լիզինգային, ֆակտորինգային, վարկ գնորդներին, միջպետական և խառը վարկեր: Միջազգային վարկի արժուքաֆինանսական պայմանները: Փոխատվական կապիտալի միջազգային շուկան: Վարկունակությունը. միջազգային վարկի գործառնությունները և դերը արդի պայմաններում: Պետության արտաքին վարկավորման քաղաքականությունը: Պետությունը որպես վարկավորող, փոխառու, երաշխավորող: Պետության դերը միջազգային վարկային հարաբերություններում: Միջազգային և ռեգիոնալ վարկային կազմակերպություններ: Վերակառուցման և զարգացման միջազգային բանկերը որպես բաժնետիրական կազմակերպություն, դրա վարկային ռեսուրսների աղբյուրները: Վարկի արտոնյալության և վերադարձելիության ցուցանիշները և դրանց էությունը: Վարկավորման խտության և վարկային շուկայի կարողության ցու-

ցանիշները: Վարկավորման արդյունավետության գնահատումը: Վարկային միջոցների պահանջարկի և վարկային ռեսուրսների հաշվեկշռվածության ցուցանիշների փոխկապվածությունն ու գնահատումը: Բանկերի ծագումը, էությունը և ֆունկցիաները: ՀՀ Կենտրոնական բանկի կառուցվածք և նրա ֆունկցիաները: ԿԲ-ի հիմնական գործառնությունները: ԿԲ-ի դրամավարկային քաղաքականության իրականացման հիմնական լծակները և մեթոդները: ԿԲ-ի և առևտրային բանկերի փոխհարաբերությունները: ՀՀ առևտրային բանկերը և նրանց դերը շուկայական էկոնոմիկայի ձևավորման, զարգացման ժամանակաշրջանում: Առևտրային բանկերի պասիվային և ակտիվային գործառնությունները և դրանց առանձնահատկությունները: Բանկային ավանդների տեսակները: Բնակչության դրամական ավանդները և նրանց տեսակները: Առևտրային բանկերի շահույթը և առաջացման աղբյուրները: Հասկացություն առևտրային բանկերի լուծարելիության մասին և նրա նշանակությունը: Բանկերը որպես վարկային համակարգի գլխավոր օղակ: Բանկերի կազմակերպման սկզբունքները: Բանկային գործում պետական մենաշնորհի վերացումը: Բանկերը և ոչ բանկային ֆինանսական ինստիտուտները (գրավատները, փոխօգնության դրամարկղերը), վարկային կոռպորատիվները, լիզինգային ընկերությունները, հիպոթեքային բանկերը, տարբեր ֆինանսական հիմնադրամները: Առևտրային բանկերը և դրանց գործառնությունները, կազմակերպչական կառուցվածքը: Բաժնետիրական առևտրային բանկերի ֆունկցիաները: Անկանխիկ հաշվարկների կազմակերպումը և իրականացումը, դրամարկղային գործառնությունների կատարումը, միջազգային վալյուտային (արժույթային) հաշվարկային և վարկային գործառնությունները: Բանկային վերահսկողության էությունը, նշանակությունը, դրա ձևերը և տեսակները:

3. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍՆԵՐ 7 ԿՐԵԴԻՏ 210 ԺԱՄ

Ագրոպարենային համալիրի (ԱՊՀ) կազմակերպությունների ֆինանսների էությունը և գործառնությունները: ԱՊՀ-ի տնտեսավարող սուբյեկտների ֆինանսների կազմակերպման հիմնական գծերը: Առանձին կազմակերպա-իրավական ձևի տնտեսավարող սուբյեկտների ֆինանսների առանձնահատկությունները: ԱՊՀ-ի ագրարային կազմավորումներում ֆինանսական աշխատանքների բովանդակությունը և խնդիրները: Ֆինանսական հարաբերությունների համակարգում առևտրային հաշվարկների սկզբունքները: Գյուղատնտեսական ապրանքարտադրողների ծախսերի ապահովման ֆինանսական համակարգը շուկայական հարաբերությունների պայմաններում: Առևտրային կազմակերպություններում դրամական միջոցների կազմակերպումը: Բանկերում ապրանքարտադրողների հաշիվները: Անկանխիկ հաշվարկների համակարգը (Պայմանագիրը որպես հիմք անկանխիկ հաշվարկների համակարգում, անկանխիկ հաշվարկներում առևտրային փաստաթղթերը, հաշվարկների ձևերը): Գյուղատնտեսական ապրանքարտադրողների հաշվարկները մատակարարների և գնորդների հետ: Հաշվարկավճարային համակարգի ճգնաժամի պայմաններում բարտերային, ֆորվարտային, ֆյուչերսային և լիզինգային գործարքների դերը: Արտահանում-ներմուծում գորառնությունների գծով հաշվարկները: Հաշվարկների ոլորտում ապրանքարտադրողների օպերատիվ աշխատանքը: Հասկացություն եկամտի և արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից հասույթի մասին: Ֆինանսական արդյունքների (համախառն շահույթ կամ վնաս, իրացումից շահույթ կամ վնաս, գործառնական և ոչ գործառնական գործունեությունից շահույթ կամ վնաս, զուտ շահույթ կամ վնաս մինչև հարկումը և հարկումից հետո) էությունը և դրանց դերը շուկայական տնտեսավարման պայմաններում: Պլանային շահույթի որոշումը որպես ձեռնարկատիրական գործունեության ելակետային պահ: Շահույթի փոփոխության վրա ազդող գործոնները և վերլուծությունը: Շահույթի բաշխումը հարկային համակարգի պայմաններում: Ագրոպարենային համալիրի ձեռնարկության տրամադրության տակ մնացած զուտ շահույթի նշանակությունը և բաշխման առանձ-

նահատկությունները: Ագրոպարենային համալիրի կազմակերպությունների հարկման առանձնահատկությունները: Գյուղատնտեսական կազմակերպությունների հարկման արտերկրյա փորձը: Հարկային արտոնությունների կիրառումը: Գյուղատնտեսական ձեռնարկությունների կողմից բյուջե կատարվող վճարումների կատարելագործումը: Ուղղակի և անուղղակի հարկերի հաշվարկման ու վճարման կարգը: ԱՊՀ-ի կազմակերպությունների ընթացիկ ակտիվների (շրջանառու միջոցների) տնտեսական էությունը և դրանց հատկանիշները: Ընթացիկ ակտիվների կազմակերպումը և պահանջարկի որոշումը: Ընթացիկ ակտիվների ձևավորման աղբյուրները: Ընթացիկ ակտիվների օգտագործման արդյունավետությունը բնորոշող ցուցանիշների համակարգը: Ընթացիկ ակտիվների արդյունավետ օգտագործման նկատմամբ հսկողությունը: Վարկավորման գործընթացի կազմակերպման սկզբունքները և ուղղվածությունը: Գյուղատնտեսության վարկավորման արտերկրյա փորձը: Շուկայական տնտեսության անցման պայմաններում գյուղատնտեսական ապրանքարտադրողների վարկավորման համակարգի վերաձևավորումը: Ագրոպարենային համալիրի ձեռնարկությունների և կազմակերպությունների վարկավորման կազմակերպումը ագրարային բանկերի կողմից: Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների վարկավորման կազմակերպման առանձնահատկությունները: Վարկային հարաբերությունների իրավական կարգավորումը: Վարկունակության գնահատման մեթոդները: Մուրհակը որպես վարկավորման գործիք: Կազմակերպությունների ֆինանսական վերլուծության էությունը, մեթոդները, կազմակերպումը և տեղեկատվության ապահովումը: Ֆինանսական հիմնական գործակիցների վերլուծության համակարգը՝ ֆինանսական ընդհանուր դրության, ֆինանսական կայունության, գործարար ակտիվության, շահութաբերության, իրացվելիության, վճարունակության և այլ տնտեսական իրավիճակների գնահատման ոլորտում: Ձեռնարկության գործունեության ֆինանսական ռազմավարությունը, դերն ու նշանակությունը: Կազմակերպությունների ինվեստիցիոն քաղաքականության իրականացման սկզբունքները: Ինվեստիցիաների մասին հասկացությունը և տեսակները: Ինվեստիցիաների ֆինանսավորման աղբյուրները և մեթոդները: Վարկային և բաժնետոմսային ինվեստիցիաներ: Բազմամյա տնկարկների աճեցման և անասնահոտի կազմավորման գծով ծախսերի ֆինանսավորումն ու վարկավորումը: Ինվեստիցիոն նախագծերի գնահատման գործընթացում գործարարության (բիզնես) պլանի դերն ու նշանակությունը: Գործարարության պլանի հասկացությունը, մշակման պայմանները և կիրառման ոլորտները: Կամակերպության գործարարության պլանի բաժինների կազմման մեթոդաբանությունը, այդ թվում՝ գործարարության պլանի համառոտ նկարագրությունը, (ամփոփ բաժին), արտադրանքի (աշխատանքի, ծառայությունների) նկարագիրը, շուկայի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, շուկայավարությունը, արտադրության պլանը, նորմատիվ-իրավական դաշտը, ֆինանսական պլանը (ֆինանսական պլանի արդյունավետության և անվնաս գործունեության վերլուծությունը), ռիսկի գնահատման պլանը: Գյուղ. կազմակերպությունների սնանկացման ֆինանսական պատճառները և ազդող գործոնները: Սնանկացման (անվճարունակության) գնահատումը: Սնանկացման կանխատեսման մեթոդները: Գյուղ. կազմակերպությունների ֆինանսական առողջացման ծրագիրը: Գյուղ. կազմակերպությունների պլանավորման էությունը, սկզբունքները և գործընթացը: Կազմակերպությունների ֆինանսական պլանավորումը: Գյուղատնտեսական ձեռնարկությունների ֆինանսական պլանի կազմման կարգը: Կազմակերպության ֆինանսական ծառայության օպերատիվ և վերահսկման աշխատանքը: Շուկայական տնտեսության պայմաններում ֆինանսական պլանավորման պրակտիկան:

4. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ **4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ**

Ապահովագրության էությունն ու գործառույթների առանձնահատկությունը ապահովագրական պաշտպանվածության գծով: Ապահովագրական պատմությունը: Հայաստանի ապահո-

վագրական շուկայի զարգացման հիմնական փուլերը և երկրի տնտեսական զարգացման կարևորագույն նշանակությունը: Ապահովագրության իրականացման կանոնակարգման հիմնական սկզբունքները: Պարտադիր և կամավոր ապահովագրության իրականացման հիմնական սկզբունքները: Պետությունը և ապահովագրությունը: Ապահովագրական գործի կազմակերպման հիմնական սկզբունքները: Ապահովագրական շուկայի հիմնական մասնակիցները և նրանց բնութագիրը: Ապահովագրական շուկայի մասնակիցների փոխհարաբերությունները: Ապահովագրության հիմնական տեսակներն ու օբյեկտները: Ապահովագրության տեսակների դասակարգման հիմնական սկզբունքները և դրանց առանձնահատկությունները: Ապահովագրական ռիսկի, կորուստի և ապահովագրական հատուցման էությունը: Ռիսկային իրադրություն և ապահովագրական պատահար: Ապահովագրական ռիսկերի տեսակներն ու դրանց կառավարումը: Անձնական, գույքային և պատասխանատվության ապահովագրության տեսակներն ու կազմակերպումը: Գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների ապահովագրություն: Գյուղատնտեսական կենդանիների ապահովագրություն: Ապահովագրական դրույքի (սակագնի) կառուցվածքը և հաշվարկման հիմնական եղանակները: Անձնական և գույքային ապահովագրության դրույքի (սակագնի) հաշվարկման մեթոդներն ու դրանց առանձնահատկությունները: Ապահովագրական պահուստների էությունը և հիմնական տեսակները: Վերաապահովագրության էությունն ու դրա գործառնությունների առանձնահատկությունը: Վերաապահովագրական շուկայի զարգացման հիմնական փուլերը: Ապահովագրական կազմակերպության կառուցվածքը: Ապահովագրական կազմակերպության տեսակները:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ 5 ԿՐԵԴԻՏ 150 ԺԱՄ

Ֆինանսական մենեջմենթի բովանդակությունը և դրա տեղը կազմակերպության կառավարման համակարգում: Ֆինանսական մենեջմենթի նպատակը, խնդիրները և հիմնարար հայեցակարգերը: Ֆինանսական մենեջմենթի հիմքը հանդիսացող տեղեկատվական աղբյուրները: Ֆինանսական մենեջմենթի մաթեմատիկական հիմունքները: Դրամական հոսքերը և դրանց գնահատման մեթոդները: Ֆինանսական ակտիվների գնահատման մեթոդները, դրանց ռիսկը և եկամտաբերությունը: Ֆինանսական մենեջմենթի ռազմավարությունը. պորտֆելային ներդրումների ռիսկ և եկամտաբերություն: Ներդրումների կառավարումը: Ներդրումային նախագծերի ռիսկ և արդյունավետության գնահատումը: Ներդրումային քաղաքականություն, կապիտալ ներդրումների բյուջեի ձևավորում, երկարաժամկետ ֆինանսավորման աղբյուրների կառավարում, ավանդական և նոր ֆինանսավորման մեթոդներ: Ֆինանսական մենեջմենթի մարտավարությունը. մարքեթինգի (շուկայավարության) ֆինանսներ, կապիտալի կառուցվածք և գնային որոշումների ընդունման սկզբունքները՝ կշռված միջին և սահմանային, կապիտալի կառուցվածքի տեսություն, արտադրական և ֆինանսական լներիջ, շահաբաժինային քաղաքականություն, բիզնեսի (գործարարության) արժեք, շրջանառու կապիտալի կառավարում և այդ բնագավառում տարվող քաղաքականություն, պաշարների և դեբիտորական պարտքերի կառավարում: Դրամական միջոցների և դրանց համարժեքների կառավարումը: Կարճաժամկետ ֆինանսավորման ավանդական և նոր մեթոդները: Շրջանառու կապիտալի ֆինանսավորման աղբյուրների կառավարումը: Ֆինանսական պլանավորում և կանխատեսում: Ռազմավարական, երկարաժամկետ և կարճաժամկետ ֆինանսական պլանավորում: Հիմնական ֆինանսական ցուցանիշների կանխատեսման մեթոդները: Ֆինանսական մենեջմենթը արժեզրկման պայմաններում: Ռիսկի մենեջմենթը: Ֆինանսական մենեջմենթի միջազգային տեսակետները: Առևտրային բանկերում ֆինանսական մենեջմենթի առանձնահատկությունները և վերլուծությունները:

6. ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 5 ԿՐԵԴԻՏ 150 ԺԱՄ

ՀՀ բյուջետային համակարգի էությունը և բյուջետային հարաբերությունների կարգավորման հիմունքները: ՀՀ պետական և համայնքային բյուջեները: ՀՀ բյուջետային համակարգը: Բյուջեի եկամուտները և ծախսերը: Բյուջեի եկամուտների կազմավորման աղբյուրները և ծախսերի ուղղությունները ըստ դասակարգման առանձին հոդվածների: Բյուջեի դեֆիցիտի ծածկման ուղիները: Բյուջեների կազմման, քննարկման և հաստատման առանձնահատկությունները: Արտաբյուջետային հիմնադրամների էությունը և նշանակությունը: Հարկերի օբյեկտիվ անհրաժեշտությունը: Հարկերը որպես պետության տնտեսական հիմք և դրանց բաշխման ու վերաբաշխման դերը: Հարկերի դերը որպես ֆինանսա-տնտեսական կատեգորիա: Հարկային հարաբերությունների սուբյեկտները: Հարկերին յուրահատուկ հատկանիշները և դրանց բնութագիրը: հարկերի ֆունկցիաները և դրանց փոխկապակցվածությունը: Տնտեսական գործընթացների վրա հարկերի ազդեցության օբյեկտիվ հնարավորությունը: Տնտեսության հարկային կարգավորումը: հարկային պլանավորում և կանխատեսում: Հարկերի տնտեսական տարրերը, դրանց սահմանումը և բնութագիրը: Հարկ վճարողները, հարկային գործակալ, հարկեր հավաքագրողները: Հարկման օբյեկտներ, հարկատրման միավորներ, հարկերի կազմավորման աղբյուրները, հարկային ժամանակաշրջան: Հարկադրույքը, դրա ձևերը և տեսակները: Հարկային արտոնությունները, դրանց էությունը, նշանակությունը, տեսակները և դասակարգումը: Հարկի տարրերի իրավական ձևակերպումը և դրա նշանակությունը: Հարկատրման դասական սկզբունքները և դրանց բնութագիրը: Հարկատրման ժամանակակից սկզբունքները, դրանց բնութագիրը և կապը դասական սկզբունքների հետ: Հարկատրման հիմնական մեթոդները: Հավասարաչափ, համամասնական, պրոգրեսիվ և ռեգրեսիվ հարկատրումները: Հարկերի վճարման եղանակները և կարգը: հարկային դեկլարացիան և դրա էությունը: Հասկացություն հարկային համակարգի մասին և նրա հիմնական տարրերը: հարկերի դասակարգումը և դրանց չափանիշները: Ուղղակի հարկերը: Անուղղակի հարկերը: Հարկեր իրավաբանական և ֆիզիկական անձանցից: համապետական և տեղական հարկեր: ՀՀ հարկային համակարգը: Հարկային համակարգի կառավարումը, դրանց ֆունկցիաները, նպատակները և խնդիրները: Հասկացություն հարկային քաղաքականության մասին, նրա նպատակը և խնդիրները: Հարկային ռազմավարություն և մարտավարություն: Հարկային քաղաքականությանը ներկայացվող պահանջները: Ժամանակակից պայմաններում ՀՀ-ն հարկային քաղաքականության հիմնական ուղղությունները: Հարկային քաղաքականության իրականացման մակարդակները: Հասկացություն հարկային մեխանիզմի օգտագործման արդյունավետությունը: Հարկային մեխանիզմի ներգործությունը հասարակության գործընթացում սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Շահութահարկի հասկացությունը: Շահութահարկ: Շահութահարկի հաշվարկման ընդհանուր հիմքը: Շահութահարկի վճարողները և հարկվող օբյեկտը: Համախառն եկամուտը և դրա նվազեցումները: Շահութահարկի դրույքաչափերը: Շահութահարկի արտոնությունները: Հարկային հաշվառումը: Հարկի հաշվարկման կարգը և բյուջե վճարման ժամկետները: Ոչ ռեզիդենտի հարկումը: Ոչ ռեզիդենտի հարկվող շահույթի որոշումը: Ոչ ռեզիդենտի շահութահարկի որոշման վճարման կարգը և ժամկետները: Շահութահարկի օրենքը խախտելու համար պատասխանատվությունը: Եկամտահարկի հասկացությունը: Եկամտահարկ վճարողները և հարկվող օբյեկտը: Եկամտահարկի գծով համախառն եկամուտը և դրանից նվազեցումները: Եկամտահարկի դրույքաչափերը: Հարկային գործակալի կողմից հարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգը: Չեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից հարկի հաշվարկման և վճարման կարգը: Տարեկան եկամտահարկի հայտարարագրումը և հարկի գումարի վճարումը: Ոչ ռեզիդենտի հարկման առանձնահատկությունները: Եկամտահարկի օրենքի խախտման համար ֆիզիկական անձնաց և հարկային գործակալների պատասխանատվությունը: Ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) հասկացությունը և այն վճարողները: Ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտը և հարկվող շրջանառությունը: Ավելացված

արժեքի հարկի դրույքաչափերը: Արտոնություններ և զրոյական դրույքաչափով հարկում: Ավելացված արժեքի հարկի հաշվարկային փաստաթղթերի լրացման կարգը: ԱԱՀ-ի հաշվարկման կարգը: ԱԱՀ-ի վճարման և հաշվարկների ներկայացման կարգն ու ժամկետները: ԱԱՀ-ի հաշվառման առանձնահատկությունները: ԱԱՀ-ի օրենքի խախտման համար պատասխանատվությունը: Հասկացություն ակցիզային հարկի մասին: Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները և հարկ վճարողները, հահավող օբյեկտը և հարկման բազան: Ակցիզային հարկի դրույքաչափերը և արտոնությունները: Ակցիզային հարկի վճարումը, հաշվարկների ներկայացումը և վերադարձման կարգը: Ակցիզային հարկի օրենքի խախտման համար պատասխանատվությունը: Հաստատագրված վճարի հասկացությունը և այն վճարողները: Հարկվող օբյեկտը և հարկման բազան: Վճարողների կողմից հաշվառման վարումը և հաշվարկների ներկայացումը: ՀՀ ներմուծված դիզելային վառելիքի և բենզինի և դրանց մանրածախ վաճառքի գործունեության համար վճարներ: Խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով իրականացվող առևտրական գործունեության համար հաստատագրված վճարները: Առևտրի իրականացման վայր կազմակերպելու համար հաստատագրված վճարները: Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար հաստատագրված վճարները: Ավտոտրանսպորտի և ավտոկանգառների գործունեության համար հաստատագրված վճարները: Արտարժույթի առք ու վաճառքի գործունեության համար հաստատագրված վճարները: Դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման և վիճակախաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարները: Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարները: Հողի հարկի մասին հասկացությունը, հարկման օբյեկտը և վճարողները: Հողի հարկի դրույքաչափերը և հաշվարկման կարգը: Հողի հարկի արտոնությունները: Հողի հարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգը: Հողի հարկի օրենքի խախտման համար պատասխանատվությունը: Պարզեցված հարկի մասին հասկացությունը, հարկ վճարողները, հարկվող օբյեկտը: Պարզեցված հարկի դրույքաչափերը և հաշվարկումը: Համախառն եկամտի և ծախսերի հաշվառման եղանակը, հաշվարկների երկարացման կարգը և ժամկետները: Պարզեցված հարկի բյուջե վճարման կարգը և ժամկետները: Պարզեցված հարկ վճարողների կողմից այլ հարկերի վճարումը: Պարզեցված հարկի օրենքի խախտման համար պատասխանատվությունը: Տեղական տուրքերի մասին հասկացությունը, դրանց վճարողների իրավունքները և պարտականությունները: Տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը: Տեղական տուրքի և վճարի հաշվարկման ու գանձման կարգը: Տեղական տուրքերի և վճարների օրենքի խախտման համար պատասխանատվությունը: Պետական տուրքի մասին հասկացությունը, վճարողները, նրանց իրավունքները և պարտականությունները: Պետական տուրքի գանձման օբյեկտները և դրույքաչափերը: Պետական տուրքի գանձման գծով արտոնությունները: Պետական տուրքեր հաշվարկելու, վճարելու, վերադարձնելու կարգը և պաշտոնատար անձնաց պատասխանատվությունը դրանք պահպանելու համար: Պետական օրենքի խախտման համար պատասխանատվությունը: Հասկացություն մաքսատուրքի մասին և դրանց տեսակները: Մաքսատուրք վճարողները, իրավունքները և արտոնությունները: Հսկողությունը մաքսատուրքերի վճարման նկատմամբ: Պատասխանատվությունը մաքսային օրենսդրությունը խախտելու համար: Մաքսատուրքի պաշտպանությունից ավել բյուջե վճարված գումարները վճարողներին վերադարձնելու կարգը:

7. ԱՐԺԵՔՊԹԵՐԻ ՇՈՒԿԱ ԵՎ ԲՈՐՍԱՅԻՆ ԳՈՐԾ 5 ԿՐԵԴԻՏ 150 ԺԱՍ

Հասկացություն արժեթղթերի մասին: Արժեթղթերը որպես տնտեսական հարաբերությունների արդյունք: Արժեթղթերը որպես կապիտալի գոյության հատուկ ձև: Արժեթղթերի և դրամական փոխատվության նմանություններն ու տարբերությունները: Արժեթղթերը որպես յուրահատուկ ապրանք: Արժեթղթերի ֆունկցիաները: Արժեթղթերի հատկանիշները՝ ժամանակային, տարածքային, շուկայական: Շուկայական բնութագրերը՝ տիրապետման, թողարկման

ձևը, շրջանառելիության բնութագիրը, ռիսկի աստիճանը, եկամտի վճարման ձևը և այլն: Արժեթղթերի հատկանիշները՝ փողի հետ փոխանակվելու (մարման, առք ու վաճառքի, թողարկողին հետ վերադարձնելու, զիջման և այլն), օգտագործելը հաշվարկներում, որպես գրավի առարկա, պահպանվում է երկար տարիներ կամ անժամկետ, ժառանգության, նվիրատվության և այլն: Արժեթղթերի թողարկման ձևերը՝ թղթային, ոչ թղթային: Արժեթղթերի դասակարգումը, արժեթղթերի դասերը (հիմնական արժեթղթեր, ածանցյալ արժեթղթեր): Արժեթղթերի տեսակները՝ բաժնետոմս, պարտատոմս, մուրհակ, չեկ, կոնոսամենտ, վարրանտ, օպցիոն, ֆյուչերս, ֆորֆորդ: Բաժնետոմսերի ընդհանուր բնութագիրը, բաժնետոմսերի հատկանիշները, տեսակները, բաժնետերերի իրավունքներն ըստ բաժնետոմսերի տեսակների: Դիվիդենտի (շահաբաժնի) էությունը և հաշվարկը: Բաժնետոմսի արժեքային գնահատումը, բաժնետոմսի գնահատման անհրաժեշտությունը: բաժնետոմսի անվանական արժեքը և շուկայական արժեքը, գնանշում, պահանջարկի գին (բիդ), առաջարկի գին (օֆֆերտա), գործարքի գին, բաժնետոմսի կուրսը, բաժնետոմսի եկամտաբերությունը: Շուկայական ընթացիկ եկամտաբերություն, վերջնական եկամտաբերություն: Բաժնետոմսի եկամտաբերության վրա ազդող գործոնները: Պարտատոմսեր, դրանց էությունը, նմանությունը և տարբերությունը բաժնետոմսերից: Պարտատոմսերի տեսակները, պարտատոմսերի արժեքային գնահատումը, պարտատոմսերի շուկայական գինը, պարտատոմսի կուրսը: Պարտատոմսերի դիսկոնտը և տոկոսային եկամուտը: Պարտատոմսերի եկամտաբերությունը: Պետական արժեթղթերը որպես պետության ներքին պարտքի գոյության ձև: Պետական արժեթղթերի ֆունկցիաները, դրանց տեղաբաշխումը, տեսակներն ըստ թողարկողների, ըստ շրջանառելիության ձևի (շուկայական, ոչ շուկայական), ըստ շրջանառության ժամկետների, եկամտի վճարման եղանակի: Պետական կարճաժամկետ պարտատոմսեր (ՊԿՊ), թողարկման եղանակը, երկրորդային շուկա, ՊԿՊ-ի եկամտաբերությունը: Ֆեդերալ փոխատվության պարտատոմսեր (ՖՓՊ): Մունիցիպալ արժեթղթեր: Մուրհակներ, ծագման պատմությունը, դերը տեսակները, ֆունկցիաները: Մուրհակի ռեկվիզիտները՝ մուրհակի նշումը, գումարը, վճարողի անվանումը և հասցեն, վճարման ժամկետը, գումարի ստացողի անվանումը, վճարման տեղը, մուրհակի կազմման տեղը և ամսաթիվը, մուրհակատուի ստորագրությունը: Մուրհակի ակցեպտումը, ինդոսամենտ, ինդոսամետ, ավալ, մուրհակի դոմիցիլյացիան (վճարողի կողմից մի ինչ որ երրորդ անձի նշանակումը) մուրհակի բողոքարկումը: Առևտրային բանկերի դեպոզիտային և խնայողական սերտիֆիկատները: Չեկ և կոնոսամենտ: Արժեթղթերի շուկայի բնորոշումը և տեսակները: Արժեթղթերի շուկայի տեղը: Արժեթղթերի շուկայի ֆունկցիաները և բաղկացուցիչ մասերը: Էմիտենտներ և ինվեստորների ընդհանուր բնութագիրը: Արժեթղթերի շուկայի մասնակիցները՝ էմիտենտներ, ինվեստորներ, ֆոնդային միջնորդներ, արժեթղթերի շուկան կարգավորող կազմակերպություններ: Ֆոնդային բրոքերներ և դիլերներ: Առևտրային բանկերը արժեթղթերի շուկայում: Դեպոզիտարիա, հիմնական ֆունկցիաները և գործունեության սկզբունքները: Հաշվա-քլիրինգային կազմակերպություններ: Ինվեստիցիոն ֆոնդը որպես արժեթղթերի շուկայի մասնակից: Ֆոնդային բորսայի խնդիրներն ու ֆունկցիաները: Ֆոնդային բորսայի անդամները, բորսայի ղեկավարման օրգանները: Արտաբորսայական ֆոնդային շուկաներ: Կարգավորման հասկացությունը և նպատակները: Արժեթղթերի շուկայի կարգավորման սկզբունքները: Արժեթղթերի շուկայի պետական կարգավորումը: Արժեթղթերի շուկայի ինքնակարգավորվող կազմակերպությունները: Արժեթղթերի թողարկման (էմիսիայի) հասկացությունը: Թողարկման կարգը և փուլերը: Առևտրային բանկերի կողմից թողարկած արժեթղթերի առանձնահատկությունները: Բաժնետոմսի արժեքի որոշումը: Անդերրայթինգ: Արժեթղթերի ներգրավման կարգը շուկայական ոլորտ: Հաճախորդների բրոքերային սպասարկումը: Աճուրդների կազմակերպումը բորսային և արտաբորսային շուկաներում: Արժեթղթերի գնանշումը: Ածանցյալ արժեթղթերի ընդհանուր բնութագիրը: Հասկացություն ածանցյալ արժեթղթերի մասին: Ֆյուչերսային պայմանագիր: Ազատ շրջանառության կամ բորսայական օպցիոն: Ֆյուչերսային և օպցիոն պայմանագրերի տեսակները ֆոնդային շուկայում:

Կարճաժամկետ տոկոսային ֆյուչերսներ, երկարաժամկետ տոկոսային ֆյուչերսներ: Բորսայական օպցիոն պայմանագրերի տեսակները: Ինվեստիցիոն վերլուծության հիմունքները արժեթղթերի շուկայում: Արժեթղթերի ինվեստիցիոն հատկությունների ֆունդամենտալ և տեխնիկական վերլուծությունը: Արժեթղթերի ռեյտինգը: Համակարգային ռիսկ, ինֆլյացիոն ռիսկ, օրենսդրական փոփոխությունների ռիսկ, տոկոսային ռիսկ, շուկայական «ցուլերի» և «արջերի» ռիսկեր, ռազմական կոնֆլիկտների ռիսկ, ինվեստավորվող օբյեկտների ռիսկ, բիզնես-ռիսկ, ինվեստորի նկատմամբ ռիսկ, ձեռնարկության ռիսկ, կառավարչական ռիսկ, լիկվիդայնության ռիսկ, վարկային ռիսկ, արժույթային ռիսկ, կոնվերտացիոն ռիսկ, արդյունաբերական ռիսկ, տարերային աղետների ռիսկ, տարածքային ռիսկ, ճյուղային ռիսկ, տեխնիկական ռիսկ: Ընդհանուր հասկացություն ինդեքսների մասին արժեթղթերի շուկայում: Ինդեքսների հաշվարկման մեթոդները: Հասկացություն արժեթղթերի պորտֆելի մասին և դրա ձևավորման սկզբունքները:

8. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ
4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ

Պետական կարգավորման ուսումնասիրության առարկան, օբյեկտը, լծակները, նպատակները և սկզբունքները: Պետական կարգավորման առարկայի և մյուս գիտությունների կապը: Շուկայական տնտեսական համակարգի առանձնահատկությունները, շուկայի անկատարությունը և չլուծված խնդիրները: Շուկայական տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը: Պետության գործունեության հիմնական բնագավառները: Պետության դերին վերաբերող տեսությունները, դրանց առանձնահատկությունները և բնորոշ գծերը: ՀՀ - կառավարման մարմինների կազմակերպական կառուցվածքը: ՀՀ նախագահի, ՀՀ ԱԺ-ի, ՀՀ Կառավարության գործառույթները տնտեսության կարգավորման գործում: ՀՀ Ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարության կառուցվածքը և գործառույթները: ՀՀ ճյուղային նախարարությունների և գերատեսչությունների գործառույթները: Կառավարման տարածքային մարմինների գործառույթները տնտեսության կարգավորման գործում: Պետության քաղաքականությունը ազդեցիկների և արդյունաբերության ոլորտում: Ագրարային բարեփոխումները, դրանց ընթացքը և հեռանկարները: Պետության քաղաքականությունը տրանսպորտի, կապի, կենցաղապասարկման, բնակարանային-կոմունալ տնտեսության, բնապահպանության և բնօգտագործման ոլորտներում: Պետական կարգավորման առանձնահատկությունները արտադրական ենթակառուցվածքների ոլորտում: Ներդրումային քաղաքականության էությունը, խնդիրները, տարրերը: Ներդրումների դերը ընդլայնված վերրատաղրության գործում: Ներդրումների ֆինանսավորման աղբյուրները: Մասնավոր ներդրումների խթանման լծակները: Ներդրումները արտադրական ոլորտում: Ներդրումները բնակարանային շինարարությունում: Ներդրումները պաշարներում: Ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատումը: Մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկումը բաց տնտեսությունում: Կապիտալի և ապրանքների միջազգային հոսքերը: Տնտեսական քաղաքականության ազդեցությունը վճարային հաշվեկշռի վրա. ա) երկրի ներքին հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը, բ) այլ երկրների հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը փոքր երկրների տնտեսության վրա: Ներդրումային պահանջարկի խթանումը: Արժույթի փոխանակային կուրսերը: Հաստատագրված և լողացող կուրսերի գործողության մեխանիզմները: Անվանական և իրական փոխանակային կուրսեր: Իրական փոխանակային կուրսի վրա ազդող գործոնները. ա) երկրի հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը, բ) այլ երկրների հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը, գ) ներդրումային պահանջարկի փոփոխությունը, դ) արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունը: Աշխատանքային ռեսուրսների բնութագիրը: Աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռները և դրանց մշակման կարգը: ՀՀ բնակչության զբաղվածությունը: Ջրազբաժնության ցուցանիշները: Կայուն իրական աշխատավարձը և սպառման գործազրկությունը: Ջրազբաժնության ապահովման ՀՀ պետական քաղաքականությունը: Աշխատուժի օգտագործման ցուցանիշները: Տնտեսության դրամավարկային կարգավորումը. տնտեսության դրամավարկային կարգավորման մեթոդոլոգիական հիմունքները: Դրամավարկային քաղաքականության իրականացման գիտական մոտեցումները: Դրամավարկային հարաբերությունների կարգավորման մեխանիզմը: Ապրանքների և փողի շրջանառությունը տնտեսությունում: Դրամավարկային քաղաքականության իրականացման մարմինները: Արժույթային կարգավորման նպատակը և պահպանումը: Պետական և շուկայական արժույթային կարգավորման փոխադարձ կապը: Արժույթային շրջանառության կազմակերպումը երկրից դուրս և արժույթային կուրսի հաստատումը: Ֆինանսների էությունը և ֆինանսական հարաբերությունների պետական կարգավորումը. ա) ֆինանսների ու ֆինանսական հարաբերությունների պետական կարգավորումը, բ) դրամավարկային և ֆինանսական հարաբերությունների առանձնահատկությունները, գ) ֆինանսների պետական կարգավորման խնդիրները: ՀՀ մաքսային մարմինները և նրանց տեղաբաշխումը: ՀՀ հարկային և բյուջետային համակարգը:

Հարկերը որպես տնտեսության պետական կարգավորման գործիք: Հարկային համակարգի հիմնական հասկացությունները: Հարկային համակարգերի տեսակները: Հարկման սկզբունքները: Հարկային առանձնահատկությունները Հայաստանի պայմաններում: Երկրի տնտեսության բյուջետային կարգավորում: Պետական բյուջեի հասկացությունը և կառուցվածքը: Բյուջետային ծախսերի նշանակությունը: Պետական բյուջեի հաշվեկշռվածության հիմնախնդիրները: Պետական պարտքը և դրա կարգավորման մեխանիզմը: Երկրի համախմբված բյուջե: Բյուջետային ֆեդերալիզմ հասկացությունը և իրականացման ուղիները: Խթանող դիսկրետ ֆիսկալ քաղաքականություն: Ոչ դիսկրետ ֆիսկալ քաղաքականություն: Պետական բյուջեի պակասորդի ֆինանսավորման աղբյուրները: Կապիտալի շուկայի կարգավորման էությունն ու անհրաժեշտությունը: Պետական կարգավորման նպատակները, խնդիրները: Պետական կարգավորման վրա ազդող գործոնները: Կապիտալի շուկայի կարգավորման սկզբունքները: Ինքնակազմակերպվող կազմակերպություններ: ՀՀ արժեթղթերի շուկայի պետական կարգավորումը: ՀՀ կապիտալի շուկայի իրավական հիմքերը և օրինաստեղծ գործունեության հիմնական ուղղությունները: Մենաշնորհային և հակամենաշնորհային քաղաքականության էությունն ու ուղղությունները: Բնական մենաշնորհի կարգավորման տեսությունները: Բնական մենաշնորհի կարգավորման Ստիգլեր-Պելցմանի մոդելը: Պետական գույքի կառավարման հայե-ցակարգը: Պետական գույքի կառավարման կատարելագործման ուղիները: Պետության մասնկացության ձևերը բաժնետիրական ընկերությունների կառավարմանը: Բաժնետիրական ընկերությունների գործունեության պետական կարգավորման լծակները: Բնակչության կենսամակարդակի պետական կարգավորման խնդիրները: Պետության սոցիալական քաղաքականությունը: Սոցիալական ապահովություն, նրա կառուցվածքն ու խնդիրները: Սոցիալական ծրագիր, դրա կառուցվածքը և ուղղվածությունը: Առողջապահական և կրթական պետական քաղաքականություն: Եկամուտների պետական կարգավորում:

9. ԻՆՎԵՍՏԻՑԻԱՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 4 ԿՐԵԴԻՏ 120 ԺԱՄ

Հասկացություն ինվեստիցիաների մասին և դրանց էությունը: Ինվեստիցիոն նախագծեր: Ինվեստիցիոն նախագծերի դասակարգումը: Նախագծի նույնականացումը (իդենտիֆիկացիան): Նախագծի նախապատրաստումը կամ մշակումը: Նախագծի նախնական գնահատումը: Բանակցություններ: Նախագծի իրականացումը: Նախագծի իրացման արդյունքների գնահատումը: Տեխնիկական վերլուծություն: Ինստիտուցիոնալ վերլուծություն: Սոցիալական վերլուծություն: Էկոլոգիական վերլուծություն: Առևտրային վերլուծություն: Ֆինանսական վերլուծություն: Տնտեսական վերլուծություն: Կապիտալի այլընտրանքային արժեքը: Փողի արժեքը տարբեր ժամանակներում: «Առանց նախագծի» և «նախագծով» իրավիճակների համեմատությունը դրամական հոսքերի հաշվարկման ժամանակ: Սահմանային (մարժինալ) վերլուծություն: Չհատուցվող ծախսեր: Նախագծերի գնահատման հիմնական չափանիշները ա) կապիտալի (արժեքի) ձևավորման եկամտա-ծախսային սկզբունքը, բ) բերովի գուտ արժեքի մեթոդը, գ) շահութաբերության (եկամտաբերության) ներքին նորման (գործակիցը), դ) հատուցման ժամկետ, ե) զեղչի հաշվառմամբ հատուցման ժամկետը, զ) շահութաբերության ինդեքսը, է) հաշվապահական շահութաբերության ցուցանիշները: Նախագծի ֆինանսական իրացվելիությունը: Նախագծին մասնակցության արդյունավետության գնահատումը: Ֆինանսական վիճակի վերլուծության ինֆորմացիոն բազան: Ինվեստիցիոն նախագծերի ազդեցությունը ֆինանսական հաշվետվության ցուցանիշների վրա: Ինֆլյացիայի և հարկման կանոնների հաշվառմամբ ֆինանսական վիճակի վերլուծության սխեման: Մուտքերի և ծախսերի հոսքերի հիմնական քաղաղրիչները: Ֆինանսական մուտքեր: Ֆինանսական ծախսեր: Իրացվելիության և արդյունավետության ցուցանիշների հաշվարկման սխեմաները: Ինվեստիցիոն և արտադրական գործունեությունից մուտքերի և ծախսերի հոսքերը: Պարտքի սպասարկման հիմնական սխեմաները (դասակարգումը): Պարտքի սպասարկման

ավանդական սխեման: Նախագծի արդյունավետության չափանիշների հաշվարկը: Վարկի տրամադրումը և նախագծի սպասարկումը վարկատուի (բանկի) տեսանկյունից: Ֆինանսավորման հատուկ դեպքեր: Հիմնական պարտքի վճարումների հետաձգումը: Հիմնական պարտքի վճարումների հետաձգումը տոկոսների կապիտալացմամբ: «Վճարումների կրիտիկական պահի» պրոբլեմը: Հիմնական պարտքի և տոկոսների վճարումները հավասար գումարներով: Նախագծի իրացումից միջոցների համամասնական ստացմամբ պարտքի սպասարկումը: Վարկառուի նկատմամբ ետպահանջի և առանց ետպահանջի իրավունքով նախագծային ֆինանսավորման սխեմաների համեմատությունը ֆինանսավորման և պարտքի սպասարկման մյուս սխեմաների հետ: Փոխառու միջոցների ներգրավումը և ֆինանսական լծակը: Ինֆլյացիայի հաշվառումը ֆինանսավորման և պարտքի սպասարկման սխեմաների գնահատման ժամանակ: Վարկի չափի և պարտքի սպասարկման սխեմայի ազդեցությունը վարկառուի ֆինանսական վիճակի ու նախագծի ֆինանսական իրացվելիության վրա: Տնտեսական (ազգային էկոնոմիկայի դիրքերից) վերլուծության մեթոդիկայի էությունը, հիմնական բաժինները: Ինվեստորի կողմից վճարվող գների ձևափոխումը տնտեսական արժեքների (մեթոդիկան): Սոցիալ-տնտեսական վերլուծության տարածաշրջանային տեսակետը և բյուջետային արդյունավետությունը: Ռիսկերի վերլուծության նպատակները և հիմնական փուլերը: Պարամետրերի հնարավոր փոփոխությունների դեպքում նախագծի զգայունության վերլուծությունը: Սցենարների վերլուծությունը: Վիճակագրական դիտարկումների մեթոդով ռիսկերի վերլուծությունը: Առանձին մասնակիցների դիրքերից ռիսկերի վերլուծությունը: Բիզնես-պլանների դերն ու նշանակությունը: Բիզնես-պլանի կազմը և կառուցվածքը: Ինվեստիցիաների տնտեսական գնահատման ծրագրային ապահովվածությունը:

10. ԲԱՆԿԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ 9 ԿՐԵԴԻՏ 270 ԺԱՄ

Ի՞նչ է բանկը: Բանկերի տեսակները, դրանց ֆունկցիաները և խնդիրները: Բանկի կառավարման կառուցվածքը: Բանկերի ստեղծման առանձնահատկությունները: Բանկային գործունեության արտոնագրումը: Բանկային գործունեության կազմակերպումը մասնաճյուղերի (բաժանմունքների) հիման վրա: Բանկերի գործունեության կազմակերպումը բանկային հոլդինգովային ընկերությունների հիման վրա: Ընդհանուր տեղեկություններ բանկի հաշվեկշռի, եկամուտների և ծախսումների հաշվետվության գծով: Բանկի հաշվեկշիռը՝ հիմնական հաշիվները: Բանկի ակտիվներն ու պասիվները: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ հաշվետվությունը: Ընդհանուր կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունը: Բանկի հեռանկարային նպատակների որոշումը: Բանկի շահութաբերության ցուցանիշները: Բանկի կապիտալի եկամտաբերության ցուցանիշները և զադող գործոնները: Բանկի ակտիվների եկամտաբերության կառուցվածքային վերլուծությունը: Բանկային գործում ռիսկի գնահատումը: Բանկի ծավալների ազդեցությունը նրա գործունեության արդյունքների վրա: Բանկերի կողմից տրամադրվող վարկերի տեսակները: Բանկային փոխատվությունների կառուցվածքը և նրա աճի վրա ազդող գործոնները: Վարկավորման գործընթացի էտապները: Վարկավորման վերլուծությունը: Փոխառուների մասին տեղեկատվության աղբյուրները: Դեպոզիտների վարման գծով ծառայությունների կառավարումը: Բանկի ոչ դեպոզիտային պասիվների և միջոցների կազմավորման այլ աղբյուրների կառավարումը: Բանկի բաժնետիրական կապիտալի կառավարումը (բանկային կապիտալի հիմնական ցուցանիշները, բանկային կապիտալի տեսակները, բանկի կապիտալի չափման մեծությունները, բանկին որքա՞ն կապիտալ է հարկավոր: Կապիտալի ներգրավման ներքին և արտաքին աղբյուրները): Բանկի իրացվելի միջոցների պահանջարկն ու առաջարկը: Իրացվելի միջոցների կառավարման ռազմավարությունը: Բանկի իրացվելի միջոցների կազմավորման և օգտագործման մեթոդը: Իրացվելի միջոցների կառուցվածքի մեթոդը: Իրացվելիության ցուցանիշների մեթոդը: Բանկի դրամական դիրքի վրա գործոնների ազդեցությունը: Պահուստների աղբյուրների ընտրման վրա ազդող գործոնները: Բանկային կապիտալի հիմնական ֆունկցիաները և բանկային

գործունեությունում ռիսկի հիմնական տեսակները: Բանկային կապիտալի տեսակները: Բանկի կապիտալի չափման մեծությունները: Անհրաժեշտ չափով բանկի կապիտալի գնահատման կարգավորման մոտեցումները: Լրացուցիչ կապիտալում պահանջմունքների բավարարման պլանավորումը: Ի հաշիվ ներքին և արտաքին աղբյուրների կապիտալի ներգրավման էությունը: Բանկերի ակտիվների և պասիվների կառավարման ռազմավարությունը: Ակտիվների և պասիվների կառավարման մոտեցումները: Ներբանկային հիմնադրամների բաշխման նպատակային ուղիները: Տոկոսադրույքների փոփոխության ռիսկի հեջավորման նպատակը: Անհավասարակշռության կառավարումը: Մարման միջին հավասարակշռված ժամկետը: Բանկի ակտիվների և պասիվների փոխհամաձայնեցված կառավարման մոդելը: Բանկային ռիսկերի կառավարումը: Բանկային ռիսկերի առաջացման պատճառները և ռիսկի դասակարգումը: Բանկային ռիսկերի կառավարման մոտեցումները: Ռիսկերի վերլուծությունը: Ֆինանսական ֆյուչերսային պայմանագրերը և դրանց անհրաժեշտությունը: Կարճաժամկետ և երկարաժամկետ հեջավորված ֆյուչերսներ: Տոկոսային օպցիոններ և սվոպ պայմանագրեր: Կրեդիտային (վարկային) օպցիոններ: Ռիսկերի կառավարման գործընթացը: Արտերկրներում (ԱՄՆ-ում) բանկի գրանցման գործընթացը: Նոր բանկերի ստեղծման մասին որոշումների ընդունման համար ազդող գործոնները: Բանկերի միավորման թվաքանակի արագ աճման պատճառները բանկերի միավորման անալիտիկ հետազոտությունը: Միջազգային բանկային գործում նորությունները: Արտերկրների բանկերի կազմակերպական կառուցվածքի ձևերը: Միջազգային բանկային գործառնությունների կարգավորումը: Միջազգային շուկաներում իրենց հաճախորդներին տրամադրվող ծառայությունները: Արդի պայմաններում միջազգային բանկային գործի զարգացման հիմնական միտումները: Արտերկրյա բանկերի կազմակերպական կառուցվածքի ձևերը: Միջազգային բանկային գործառնությունների կարգավորումը: Միջազգային շուկայում բանկերի կողմից իր հաճախորդների համար կատարվող ծառայությունները: Միջազգային բանկերի մոտ ծագող պրոբլեմները: Բանկային գործում նոր ծառայությունների դրսևորման պատճառները: Տրաստային ծառայությունները և դրանց էությունը: Ինվեստիցիոն բանկային ծառայությունները: Լիզինգային ծառայությունների բանկերի եկամուտների կազմավորման գործընթացում: Գրավային գործառնությունների գծով ծառայությունների էությունը: Ֆակտորինգը և դրա գծով ծառայությունների էությունը: Մուրհակային գործառնությունների գծով ծառայությունների էությունը: Ապահովագրական ծառայություններ: Նոր բանկային ծառայությունների գործընթացը:

11. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Ֆինանսական և բանկային վիճակագրության առարկան մեթոդը, խընդիրները և կազմակերպումը, ֆինանսա-տնտեսական հաշվարկների հիմունքները, ֆինանսական հոսքերի արտացոլումը ազգային հաշիվների համակարգում (ԱՀՀ), ձեռնարկությունների ֆինանսների վիճակագրություն, բանկային վիճակագրություն, վարկային վիճակագրություն, բորսային վիճակագրություն, սպահովագրության վիճակագրություն, դրամաշրջանառության վիճակագրություն, արժեթղթերի վիճակագրություն, գների և արժեգրկման վիճակագրություն, արտարժույթային փոխարժեքների վիճակագրություն, Հայաստանի ֆինանսական դրության վիճակագրություն:

12. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Պետական և տեղական դրամական միջոցների իրավական կարգավորումը: Հայաստանի Հանրապետության բյուջետային իրավունքը: Հայաստանի Հանրապետության և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային իրավունքները: Տնտեսական կազմակերպությունների ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրները և իրավական ռեժիմը: Պետական եկամուտների իրավական կարգավորումը: Հարկերի իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում: Իրավաբանական և ֆիզիկական անձանցից գանձվող

հարկերի իրավական կարգավորումը: Պետական և ոչ հարկային եկամուտների իրավական կարգավորումը: Արտաբյուջետային պետական սոցիալական հիմնադրամների իրավական հիմունքները: Պետական վարկի իրավական հիմունքները: Պետական ծախսերի իրավական կարգավորումը և բյուջետային ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետությունում: Բանկային վարկավորման իրավական հիմունքները: Դրամական շրջանառության և հաշվարկների իրավական հիմունքները: Արժույթային գործառնությունների և վերահսկողության իրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում:

13. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 6 ԿՐԵԴԻՏ 180 ԺԱՄ

Հայաստանի հանրապետության հարկային համակարգը: Հասկացություն հարկային համակարգի մասին: Հարկային համակարգի ձևավորման ու զարգացման «ազգային» օրինաչափությունների տարբերությունները օտարերկրյա «մոդելներից»:

ՀՀ հարկային ծառայության մարմնի գործունեության կազմակերպա-իրավական հիմունքները: Հարկային ծառայության մարմնի խնդիրները: Հարկի տեսականները և դասակարգման սկզբունքները: Հարկման տնտեսական սկզբունքների ընդհանուր բնութագիրը:

Հարկի կառուցվածքը և տարրերը: Հարկային բեռը և նրա թեթևացման ուղիները:

Հարկային հարաբերությունների կարգավորումը: Հարկային արտոնությունների տեսականները: Հարկային պարտավորությունները: Պատասխանատվությունը հարկային օրենսդրությունը խախտելու համար:

Ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման կարգը: Ալցիզային հարկի հաշվարկման և վճարման կարգը:

Շահութահարկի հաշվարկման և վճարման կարգը: Տնտեսավարող սուբյեկտի համախառը եկամուտը: Եկամտահարկի հաշվարկման և վճարման կարգը: Համախառը եկամուտը: Պարզեցված հարկի հասկացությունը: Գույքահարկի և հողի հարկի հաշվարկման և վճարման կարգը: Հարկման բազան: Հարկի դրույքաչափերը և արտոնությունները: Հարկի հաշվարկման և վճարման կարգը:

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքներ և փոխադրամիջոցներ փոխադրելիս գանձվող վճարները:

Հասկացություն մաքսատուրքերի մասին:

14. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՈՄԵՐՑԻԱ 3 ԿՐԵԴԻՏ 90 ԺԱՄ

Էլեկտրոնային կոմերցիայի դերը շուկայական տնտեսության ներկայիս պայմաններում էլ ավելի է կարևորվում, և առանց այս գիտության իմացության թերի է լինում «ԱՊՀ ֆինանսների կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության բակալավր մասնագետի պատրաստումը: Ծրագիրը այս մասնագիտության համար բաղկացած է 10 թեմաներից, իր 59 ենթաթեմաներով:

Էլեկտրոնային բիզնեսը և էլեկտրոնային կոմերցիան: Էլեկտրոնային կոմերցիան՝ որպես բիզնեսի վարման ձև, հիմնական հասկացությունները, առանձնահատկությունները և հիմնախնդիրները, զարգացման միտումները: Էլեկտրոնային կոմերցիան, համակարգերը, կազմակերպատնտեսական մոդելները, տեղը ինտերնետ ցանցում, համակարգի օգտագործման հետ կապված խնդիրները և նրանց առանձնահատկությունները ՀՀ-ում: Էլեկտրոնային կոմերցիայի ձևերը՝ խանութներ, աճուրդներ, պորտալներ, առևտրային հրապարակներ: Ինտերնետ ցանցի դերը էլեկտրոնային կոմերցիայի համակարգում՝ ինտերնետի կառուցվածքը, գործունեությունը, բաղկացուցիչ մասերը և հիմնական ծառայությունները, մարքեթինգը և ինտերնետ ցանցի հնարավորությունները: WEB էջը՝ որպես էլեկտրոնային կոմերցիայի բիզնեսի հիմք: WEB էջի դասակարգումը, բիզնես մոդելները, էջի ստեղծման փուլերը, արդյունավետության գնահատումը: Փողի շարժը ցանցում: Էլեկտրոնային վճարումների տարբերակները, վճարային համակարգերը, ինտերնետ բանքինգ, EDram և ArCa վճարման համակարգեր: Կազմակերպություն-

հաճախորդ դասի (B2C) էլեկտրոնային կոմերցիա: Ինտերնետ մարքեթինգ, ապրանքային ու գնային քաղաքականությունը, մրցունակությունը ինտերնետում, սպառողը ինտերնետ միջավայրում: Կոմունիկացիոն քաղաքականությունը ցանցում՝ գովազդի առանձնահատկությունները, էլեկտրոնային PR, իրացման խթանում: Կազմակերպություն-կազմակերպություն դասի (B2B) էլեկտրոնային կոմերցիա՝ արժեքի ավելացման շղթաներ, գործարարության զարգացումը ինտերնետում, էլեկտրոնային առևտրում մասնակիցների (գնորդների, վաճառողների) վիճակագրական վերլուծություն, բիզնեսը և էտիկան կազմակերպությունների միջև: Էլեկտրոնային առևտրի կազմակերպարավական հիմքերը: Ինտերնետում աշխատանքի կազմակերպական և հասարակական կարգավորումը, տեխնիկական կորրեկցիաները, անվտանգության ապահովման միջոցները, շիֆրավորում, էլեկտրոնային ստորագրություն և կնիք ունենալու առավելությունը:

Ծրագրում ներառված թեմաների ուսումնասիրումը հնարավորություն է տալիս ուսանողներին՝ պատշաճ մակարդակի գիտելիքներ ձեռք բերել էլեկտրոնային շուկայում արդյունավետ ու նպատակաուղղված գործունեություն ծավալելու, էլեկտրոնային գործառնությունների, ինտերնետ ցանցում մարքեթինգային հետազոտությունների իրականացման, անհրաժեշտ տեղեկատվության ստացման, հիմնավոր ապրանքային, գնային, բաշխման և կոմունիկացիոն քաղաքականություն իրականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային կոմերցիայի բնագավառում այլ խնդիրների արդյունավետ լուծման համար:

15. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 7 ԿՐԵԴԻՏ 210 ԺԱՄ

Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական վերլուծության անհրաժեշտությունը: Ֆինանսական վերլուծության դերը տնտեսավարման պայմաններում, Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության ընդհանուր գնահատումը:

Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծությունը: Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական արդյունքների ձևավորման և բաշխման մոդելը, շահույթի ցուցանիշների մակարդակի, դինամիկայի և կառուցվածքի վերլուծությունը, արտադրանքի ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթի գործոնային վերլուծությունը, շահույթի օգտագործման վերլուծությունը, շահութաբերության ցուցանիշների համակարգը և հաշվարկման մեթոդները, շահութաբերության ցուցանիշների գործոնային վերլուծությունը:

Ֆինանսական կայունության, գործարար ակտիվության և իրացվելիության գնահատման ցուցանիշների ու դրանց հաշվարկման մեթոդիկան:

Տնտեսավարող սուբյեկտների սնանկացումը և ռիսկերի գնահատման մեթոդիկան: Տնտեսավարող սուբյեկտների սնանկացման էությունը, սնանկացման պատճառները և ազդող գործոնները, անվճարունակության գնահատումը, տնտեսավարող սուբյեկտների սնանկացման կանխատեսման մեթոդները, տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական առողջացման ուղիները, ֆինանսական պլանի կազմման համառոտ նկարագիրը, ռիսկի գնահատում:

ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՅՆՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈՎ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

4.1. Առկա ձևով ուսուցման դեպքում լսարանային պարապմունքներին պետք է տրամադրվի յուրաքանչյուր ուսումնական դասընթացին հատկացվող ժամաքանակի 50%-ից ոչ պակասը, իսկ հեռակա ձևով ուսուցման դեպքում՝ 10%-ից ոչ պակասը:

4. 31112 - «ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԿ»

դասիչ, մասնագիտության անվանում

ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԻՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏ-ՆԵՐԸ

5.1. Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական
որակավորման աստիճան

ծրագրի յուրացման ժամկետը, ներառյալ ուսանողի հետազոտական աշխատանքը, առկա ուսուցման ձևով 242 շաբաթ է, որից.

- տեսական ուսուցումը` 150 շաբաթ,
- քննաշրջանները` 27 շաբաթ,
- պրակտիկաները` 19 շաբաթ,
- եզրափակիչ պետական որակավորումը, ներառյալ ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի ձևակերպումը և պաշտպանությունը` 10 շաբաթ,
- արձակուրդները (ներառյալ հետբուհական 8-շաբաթյա արձակուրդ)` 36 շաբաթ:

Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի թեման ուսանողին տրվում և թեմայի ղեկավար է նշանակվում 5-րդ ուսումնական կիսամյակի 2-րդ շաբաթից ոչ ուշ, այն մշակվում է 5-րդ և 6-րդ կիսամյակներում` տեսական ուսուցմանը զուգահեռ, ճշտվում նախադիպլոմային պրակտիկայի ընթացքում և կարող է ներառել նույն կիսամյակներում կատարվող կուրսային աշխատանքների նյութերը: Դիպլոմային աշխատանքի կատարման ժամանակացույցը, ընթացիկ վերահսկման և ատեստավորման ձևերը, պաշտպանության թույլատրման կարգը սահմանում է բուհը (ֆակուլտետը), որը հաստատում է բուհի գիտական խորհուրդը:

5.2. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցող անձնաց համար տնտեսագիտության
որակավորման

բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի յուրացման
աստիճան

ժամկետները հեռակա ուսուցման ձևով երկարացվում են մինչև 1 տարի` սույն պետական կրթական չափորոշիչի թ.1.2-ով սահմանված ժամկետի նկատմամբ:

5.3. Ուսանողի ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը սահմանվում է շաբաթական 45 ժամ` ներառյալ լսարանային և արտալսարանային (ինքնուրույն) աշխատանքները:

5.4. Առկա ուսուցման ձևով սովորող ուսանողի լսարանային պարապմունքների ծավալը չպետք է գերազանցի շաբաթական 30 ժամը: Նշված ծավալում չեն ընդգրկվում ֆիզիկական կուլտուրայի և ֆակուլտատիվ դասընթացների դասաժամերը: Ուսումնական տարվա տեսական ուսուցման տևողությունը 34 շաբաթ է:

5.5. Հեռակա ուսուցման ձևով սովորող ուսանողի համար պետք է ապահովվի տարեկան 160 ժամից ոչ պակաս ծավալով դասախոսների հետ պարապմունքներ անցկացնելը:

5.6. Ուսումնական տարվա արձակուրդները պետք է 7-10 շաբաթ լինեն, այդ թվում` 2 շաբաթից ոչ պակաս` ձմեռային քննաշրջանից հետո:

5. 31112 - «ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

դասիչ, մասնագիտության անվանում

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ
որակավորման աստիճան

**ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

6.1. Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի

որակավորման աստիճան

մշակմանը ներկայացվող պահանջները

6.1.1. *Սույն պետական կրթական չափորոշիչի հիման վրա բուհն ինքնուրույն է մշակում և հաստատում տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական*

որակավորման աստիճան

ծրագիրը:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացների ուսումնառությունը պարտադիր է, իսկ նրանց ցանկը երաշխավորական բնույթ է կրում, որը կարող է փոփոխել կամ լրացնել բուհը:

Ուսումնական դասընթացի բաղադրիչների տեսակները (դասախոսություն, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ, տնային և կուրսային աշխատանքների խորհրդատվություն և այլն) և ծավալները՝ դասընթացին հատկացված դասաժամերի շրջանակում սահմանում է բուհը: Ուսուցման ողջ շրջանում ուսումնական ժամաքանակի ընդհանուր հաշվեկշռում ակտիվ մեթոդներով ուսանողի տեսական ուսուցումը չպետք է ցածր լինի 25%-ից:

Ուսանողի գիտելիքի ստուգման և գնահատման համակարգի տեսակն ընտրում է բուհը: Տվյալ դասընթացից ուսանողի գիտելիքների եզրափակիչ գնահատականը չպետք է հիմնավորվի միայն վերջին քննության (ստուգարքի) արդյունքով, այն պետք է հաշվի առնի ուսանողի ակտիվությունը դասընթացից և ընթացիկ առաջադիմությունը կիսամյակի(ների) ընթացքում: Եզրափակիչ գնահատման դեպքում գնահատականի 40%-ը ձևավորվում է ընթացիկ առաջադիմությամբ և միջանկյալ ստուգումներով, իսկ 60%-ը՝ եզրափակիչ քննության (ստուգարքի) արդյունքով:

Քննությունների անցկացման հիմնական ձևը գրավոր կամ գրավոր-բանավորն է: Բացառության կարգով բուհը կարող է սահմանել բանավոր քննություններ, բայց դրանք չպետք է գերազանցեն քննությունների ընդհանուր քանակի 25-ից 30%-ը: Բուհի իրավունքն է ուսումնական դասընթացների եզրափակիչ ստուգման եղանակի (ստուգարք կամ քննություն) ընտրությունը և ձևի սահմանումը:

Ուսանողների գիտելիքների ընթացիկ գնահատման համակարգում բուհն օգտագործում է իրեն նպատակահարմար գնահատման սանդղակ: Միջազգային մասնագիտական կրթական համակարգին ինտեգրվելու և ուսանողների ակադեմիական շարժունակությունն ապահովելու նպատակով ուսումնական գործընթացում գերադասելի է գիտելիքների ստուգման և գնահատման վարկային (կրեդիտային) համակարգի ներդրումը և օգտագործումը: Դասընթացից եզրափակիչ գնահատական նշանակելու դեպքում անհրաժեշտ է անցնել գիտելիքների գնահատման ավանդական համակարգին («գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար», «ստուգված», «չստուգված»):

Կուրսային աշխատանքը դիտարկվում է որպես դասընթացի ուսումնական բաղադրիչ և իրականացվում է այդ դասընթացին հատկացրած դասաժամերի հաշվին: Հիմնական մասնագիտական դասընթացներից կուրսային աշխատանքի կատարելը պարտադիր է, բայց ուսուցման ողջ շրջանում դրանք չպետք է գերազանցեն 5-ը:

Մասնագիտության ուսումնական պլանով (հավելված 2) նախատեսված բոլոր ուսումնական դասընթացների, կուրսային աշխատանքների և պրակտիկաների համար պարտադիր է եզրափակիչ գնահատականի նշանակումը:

Մասնագիտացման դասընթացների կրթաբլոկը ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկի տրամաբանված հաջորդականությունն է, որը ընտրած մասնագիտությամբ նախատեսված գործունեության բնագավառներում նպաստում է ուսանողի խոր մասնագիտական գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանը: Բուիը պետական կրթական չափորոշիչի հավելված 1-ում տրված ցանկից ինքնություն է ընտրում իրեն համապատասխանող մասնագիտացումը և իրավունք ունի փոփոխելու կամ լրացնելու մասնագիտացման դասընթացների ցանկը, կամ էլ ՀՀ ԿԳՆ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչը մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցրած՝ ձևավորելու նոր մասնագիտացում:

Ֆակուլտատիվ դասընթացների կրթաբլոկի ցանկը նույնպես երաշխավորական բնույթ է կրում, սակայն կրթաբլոկին հատկացրած ժամաքանակների 30%-ին վերաբերվող դասընթացներից պարտադիր է ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումը:

6.1.2. Մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու դեպքում բուին իրավասու է՝

- 5%-ի սահմաններում փոփոխել դասընթացների կրթաբլոկներին հատկացրած ժամաքանակները, իսկ առանձին դասընթացներինը՝ մինչև 10%-ի սահմաններում,
- ձևավորել հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթաբլոկ, որի հանրապետական բաղադրիչում նշված 12-ից (թ. 4 բաժին) պարտադիր են հետևյալ դասընթացների առկայությունը՝

«Ֆիզիկական կուլտուրա»,

«Հայ ժողովրդի պատմություն»,

«Հայոց լեզու և հայ գրականություն»,

«Ռուսաց լեզու և խոսքի մշակույթ»,

«Օտար լեզու»,

«Փիլիսոփայություն»:

Մնացած դասընթացները կարող են ընդգրկվել ըստ բուիի հայեցողության:

Այս սեպքում հնարավոր է նրանց միջդասընթացային միավորումը՝ բավանդակության պարտադիր նվազագույնի պահպանմամբ:

Ֆիզիկական կուլտուրայի պարապմունքները հեռակա և դրսեկության ձևերով ուսումնառող ուսանողների համար կարող են իրականացվել նրանց ցանկությամբ,

- ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՄՏ) դասընթացների դասավանդումն իրականացնել հեղինակային դասախոսությունների, անհատական և կոլեկտիվ գործնական պարապմունքների, առաջադրանքների և սեմինարների ձևով՝ բուիի մշակած ծրագրերով, հաշվի առնելով բուիի մասնագիտական առանձնահատկությունները, դասախոսների հետազոտական ուղղվածությունը և հակումները, որոնք կապահովեն կրթաբլոկի դասընթացների թեմատիկայի լուսաբանումը՝ ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը համապատասխան,
- սահմանել ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՄՏ), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸԲ) կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների առանձին բաժինների դասավանդման անհրաժեշտ խորությունը՝ կրթաբլոկների դասընթացների ուղղվածությանը համապատասխան և մասնագիտության առանձնահատկությունների հաշվառմամբ: ԸԲ կրթաբլոկում պարտադիր է «Քաղ, պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի դասավանդումը: Բուիական բաղադրիչներին առանձնացված ժամաքանակները բուիի հայեցողությամբ կարող են օգտագործվել հանրապետական բաղադրիչներում ընդգրկված դասընթացների ավելի խորը դասավանդման համար, իրականացնել

31112 - «Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում» մասնագիտությանը

դասիչ, մասնագիտության անվանում

տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը
որակավորման աստիճան

կրճատված ժամկետով՝ համապատասխան ուղղվածության միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող ուսանողների համար: Ուսուցման ժամկետների կրճատումը կատարվում է մասնագիտական կրթության նախորդ աստիճանում ուսանողների ձեռք բերած գիտելիքների, ունակությունների և հմտությունների հիման վրա: Այդ դեպքում ուսուցման տևողությունը 2 (երկու) տարուց պակաս չպետք է լինի: Կրճատված ժամկետով ուսուցումը թույլ է տրվում նաև այն անձանց, որոնց կրթական մակարդակը և բացառիկ ընդունակությունները հիմք են նման ուսուցում իրականացնելու համար,

• առանձին դեպքերում, մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող ԿԳՆ գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցված 311104 - «Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում» մասնագիտության
դասիչ, մասնագիտության անվանում

համար բուհերն իրավունք ունեն մինչև 20%-ի սահմանում փոփոխել ընդհանուր մասնագիտական դասընթացների (ԸՄԴ) կրթաբլոկի ժամաքանակը, իսկ առանձն դասընթացները՝ մինչև 40%-ի սահմաններում:

6.2. Ուսումնական գործընթացի կադրային ապահովման պահանջները

Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի
որակավորման աստիճան

իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, որոնք, որպես կանոն, ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս) և հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ: հատուկ մասնագիտացնող դասընթացներ դասավանդող դասախոսները, որպես կանոն, պետք է ունենան գիտական աստիճան (գիտական կոչում) և/կամ համապատասխան գործունեության ոլորտում աշխատանքի փորձ:

Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսները պետք է կազմեն պրոֆեսորադասախոսական կազմի 50%-ից ոչ պակասը:

Հիմնական հաստիքային դասախոսները և 0.25 հաստիքից բարձր ձևակերպված համատեղողները նույնպես պետք է կազմեն ընդհանուրի 50%-ից ոչ պակասը:

6.3. Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական ապահովման պահանջները

Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի
որակավորման աստիճան

իրականացումը պետք է ներառի ուսանողների կողմից մասնագիտական դասընթացների լաբորատոր, գործանական (սեմինար) աշխատանքների կատարում, ներառյալ որպես պարտադիր բաղադրիչ՝ անհատական համակարգիչներով կիրառական ծրագրային փաթեթների օգտագործմամբ գործնական առաջադրանքների կատարում: Պարտադիր պահանջ է նաև անհրաժեշտ ինֆորմացիոն բազայի ստեղծումը, որն ապահովվում է բարձրորակ մասնագետի պատրաստումը և ուսանողի մուտքը տարբեր ինֆորմացիոն աղբյուրներ, ներառյալ Internet-ը:

Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի
որակավորման աստիճան

իրականացումը պետք է ապահովվի յուրաքանչյուր ուսանողի մուտքով դեպի գրադարանային ֆոնդեր և տվյալների բազաներ, որոնք ըստ բովանդակության՝ համապատասխանում են հիմնական կրթական ծրագրով նախատեսված դասընթացների լրիվ ցանկին, նույն դասընթացների բաղադրիչներին (դասախոսություններ, գործնական, սե-

մինար և լաբորատոր պարապմունքներ, կուրսային և դիպլոմային աշխատանքների խորհրդատվություն, պրակտիկաների ծրագրեր) նվիրված մեթոդական ձեռնարկների և ցուցումների առկայությամբ, ինչպես նաև տեսալսողական, բազմամիջավայրային նյութերով և ցուցադրական ձեռնարկներով:

Բուհի գրադարանը պետք է հագեցված լինի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների ուսումնամեթոդական համալիրներով, մասնագիտության նորմատիվ-իրավական ակտերով, տեղեկատու գրականությամբ և չափորոշիչներով:

6.4.Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման պահանջները **Տնտեսագիտության բակալավրի** պատրաստման հիմնական կրթական ծրագրի որակավորման աստիճան

Իրականացնող բուհը պետք է ունենա նյութատեխնիկական բազա, որը համապատասխանում է գործող սանիտարահիգիենիկ նորմերին և հակահրդեհային կանոններին, ապահովում է օրինակելի ուսումնական պլաններով նախատեսված լաբորատոր, սեմինար, գործնական պարապմունքների և միջոցառումների պատարաստման բոլոր ձևերի և ուսանողների հետազոտական աշխատանքների կատարումը:

6.5.Պրակտիկայի կազմակերպման պահանջները

Ուսուցման ընթացքում առանձին մասնագիտական դասընթացների և ընտրած մասնագիտացման գծով գործնական ունակությունների, ապագա աշխատավայրում հմտություններ և փորձառումներ ձեռք բերելու նպատակով բնագավառի կազմակերպատիրական տարբեր ձևերի կազմակերպություններում, հիմնարկներում և հաստատություններում կազմակերպվում են ուսանողների ուսումնական և արտադրական (նախադիպլոմային) պրակտիկաներ:

Ուսանողի նախադիպլոմային պրակտիկան մասնագիտության ուսումնական պլանի պարտադիր բաղադրիչն է, որի կազմակերպման և իրականացման պատասխանատուն բուհն է: Նախադիպլոմային պրակտիկան կազմակերպվում է այն հաշվով, որպեսզի շրջանավարտը կարողանա այդ ընթացքում ստացած փորձառությունը օգտագործել իր դիպլոմային աշխատանքը ձևավորելիս: Եթե շրջանավարտը ուսուցումը համատեղում է աշխատանքի հետ, բուհն իրավունք ունի թույլատրել աշխատավայրում պրակտիկայի անցկացումը, եթե շրջանավարտի աշխատանքի բնույթը համապատասխանում է բուհում ուսումնառած մասնագիտությանը:

Պրակտիկան կարող է կամակերպվել նաև որոշակի կազմակերպությունում՝ նախատեսված կազմված անհատական ծրագրով, եթե շրջանավարտը նույն կազմակերպությունում պաշտոն է զբաղեցնում:

Արտադրական պրակտիկայի տեղերի բացակայության դեպքում բուհը (ֆակուլտետը) այն կազմակերպում է սեփական նյութատեխնիկական բազայի վրա, եթե այն հագեցված է ժամանակակից սարքավորմամբ և ծրագրային միջոցներով:

6. 31112- «ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»
դասիչ, մասնագիտության անվանում

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

7.1. Շրջանավարտը պետք է կարողանա լուծել

Սույն պետական կրթական չափորոշիչի թ. 1.2 կետում նշված որակավորմանը համապատասխանող խնդիրները:

Տնտեսագիտության բակալավրը պետք է.

ա) հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում՝

- իմանա ՀՀ Սահմանադրության հիմնադրույթները և իր բնագավառի օրենքները,
- ազատ տիրապետի մասնագիտական հայոց լեզվին (գրավոր և բանավոր) և հաղորդակցվի երկու օտար լեզուներով,
- ունենա պատկերացում առողջ կենսակերպի մասին, տիրապետի ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- գիտենա հայ ժողովրդի պատմությունը և արդի շրջանի քաղաքագիտական զարգացումները,
- ծանոթ լինի համաշխարհային մշակույթին, տիրապետի վարվելաձևի կուլտուրային, իմանա դրա էթիկական և իրավական նորմերը, որոնք կարգավորում են մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները,
- գիտենա հոգեբանության և մանկավարժության տարրերը,
- ծանոթ լինի ժամանակակից փիլիսոփայական ուղղություններին, գիտենա կեցության մասին գիտության հիմնադրույթները, նյութականի և վերացականի հասկացությունները, մատերիայի կազմակերպման ձևերը, հետևի սոցիալական գլոբալ զարգացումներին,
- գիտենա տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, պատմությունը, զարգացման մեխանիզմները, մակրո- և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները,

բ) բնագիտության և մաթեմատիկայի բնագավառում՝

- ծանոթ լինի ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքներին և հայեցակարգերին, բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրներին,
- տիրապետի մաթեմատիկայի հիմնական բաժիններին, հավանականությունների տեսության և մաթ. վիճակագրության մեթոդներին, մաթեմատիկական մոդելավորման եղանակներին, որոնք օգտագործվում են ֆինանսատնտեսական բնագավառի խնդիրների լուծման համար,
- տիրապետի ինֆորմացիայի հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդներին և կարողանա օգտագործել ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաներ,

գ) մասնագիտական գործունեության բնագավառում՝

- ունենա համակարգային պատկերացում ՀՀ և համաշխարհային տնտեսության կառուցվածքի և զարգացման միտումների մասին,
- հասկանա արդի աշխարհում տնտեսական գործընթացների բազմազանությունը և դրանց կապը հասարակական գործընթացների հետ,
- կարողանա իր գործունեությունում օգտագործել ստացած գիտելիքները կազմակերպությունների տնտեսության, մենեջմենթի և մարքեթինգի, վիճակագրության, համաշխարհային տնտեսագիտության և վերլուծության, հաշվապահական հաշվառման, հաշվետվության և աուդիտի, դրամի, բանկերի, արժեթղթերի շուկայի, ապահովագրման, հարկերի և հարկավորման, ներդրումների և այլ բնագավառներում,
- գիտենա դրամավարկային կարգավորման կազմակերպման հիմունքները, դրա-

մաշրջանառության տարբեր մասերի միջև փոխադարձ կապի, դրամային և առևտրային շրջանառության, բանկային և բորսային գործի հիմունքները, ապահովագրման և հարկավորման կազմակերպման, պետական և մունիցիպալ ֆինանսների հիմունքները,

- պատրաստ լինի մասնագիտական գործունեության՝ ֆինանսավարկային համակարգի և տնտեսական ոլորտի կազմակերպություններում, ներառյալ արտաքին տնտեսական ոլորտը,
- կարողանա ինքնուրույն աշխատել ոչ ստանդարտ իրավիճակներում վերլուծական մոտեցում պահանջող պաշտոններում, լուծել ոչ ստանդարտ խնդիրներ, կանխագուշակել դրամային և ֆինանսավարկային ոլորտների տնտեսական գործընթացները,
- լուծի որոշակի իրավիճակային խնդիրներ՝ կիրառելով ֆինանսաբանկային ոլորտը կանոնակարգող իրավական նորմեր,
- որոշակի օրինակների վրա հաշվարկի բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական նորմատիվները,
- կազմակերպության կամ բանկի ֆինանսատնտեսական հաշվետվության հիման վրա կատարի դրանց ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն,
- տեսնի ֆինանսավարկային հարաբերությունների զարգացման և իր մասնագիտական գործունեության հեռանկարները,
- լինի մրցունակ, ունենա գիտելիքներ հարակից բնագավառներում,
- կարողանա գիտականորեն կազմակերպել իր աշխատանքը:

Տնտեսագիտության բակալավրի հատուկ պատրաստությանը վերաբերվող պահանջները սահ-
որակավորման աստիճան

մանում է տվյալ մասնագիտացումն առաջադրող բուհը՝ ՀՀ ԿԳՆ պետական կրթական չափորոշիչները մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցրած, որոնք ՀՀ ԿԳՆ-ում մասնագիտացումը հաստատելուց հետո միասնական են դառնում այլ բուհերի համար, բխում են մասնագիտացման կրթաբլոկի բովանդակությունից և տվյալ մասնագիտացմամբ մասնագետներ պատվիրած կազմակերպության գործառնություններից:

Նշված փորձառնությունները ներառում են՝

- հետազոտական աշխատանք վարելու, վերացական տրամաբանական մտածողության, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները կիրառելու և քննադատական վերլուծության ունակություններ,
- անձանոթ պայմաններում առաջացած ոչ կոնստրուկտիվ հիմնահարցերի բացահայտման, հաղթահարման և վերջնական լուծման, սեղմ ժամանակացույցով աշխատանքներ կազմակերպելու ընդունակություն,
- մասնագիտական գործունեության բնագավառում նորամուծությունների նկատմամբ ընկալունակության ցուցաբերում:

Բակալավրի՝ մարդկանց հետ աշխատելու փորձառությունը ենթադրում է նրա ունակությունները՝

- այլ մարդկանց հետ փոխգործակցելու, կոլեկտիվում նրանց հետ հաղորդակցվելու,
- խնդիրներ ձևավորելու և դրանք ենթականերին պատվիրակելու,
- մարդկանց ստեղծագործական աճի ձգումը խրախուսելու և զարգացումն ապահովելու,
- ծագած տարաձայնությունները և բախումները լուծելու,
- տարբեր զարգացման և մտավոր մակրադակի տեր մարդկանց հետ համագործակցելու,
- մասնագիտական հարցերի շրջանակներում ընդունելի որոշումների հասնելու նպատակով բանակցություններ վարելու,
- տարաբնույթ և տարասեռ մշակութային միջավայրերում աշխատելու և այլն:

Բակալավրի՝ ինֆորմացիայի հետ աշխատելու փորձառությունը պահանջում է

պարտադիր հմտություններ՝

- պաշտոնական և ոչ պաշտոնական իրավիճակներում սեփական կարծիքը գրավոր և բանավոր ձևերով շարադրելու, քննարկելու և գործուն կարգով պաշտպանելու,
- լեզվային և մշակութային տարբերությունների հաշվառմամբ գրավոր ինֆորմացիան լսելու և վերլուծորեն ընկալելու,
- բանավոր, տպագրված և էլեկտրոնային աղբյուրներից ստացված ինֆորմացիան որոնելու, ստանալու, համակարգելու, գրավոր ձևակերպելու և օգտագործելու:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման գծով բակալավորը պետք է ծանոթ լինի տվյալների մշակման երկուսից ոչ պակաս համակարգերի, անհատական համակարգչային և բազմաօգտագործման տեղային ցանցային համակարգերին, ինչպես նաև կարողանա կատարել ինֆորմացիայի որոնում տվյալների ցանցային բազաներում (www), օգտվել էլեկտրոնային փոստից, տվյալների բազաների փաթեթից:

Տնտեսագիտության բակալավորը պետք է հասկանա իր մասնագիտության էությունը և սոցիա-

որակավորման աստիճան

լական նշանակալիությունը, իր որակավորման շարունակական բարձրացման անհրաժեշտությունը հետբուհական և լրացուցիչ կրթություն ստանալ կամ էլ նոր գիտելիքների ինքնուրույն տիրապետման միջոցով:

7.2. Բակալավրի եզրափակիչ պետական որակավորման պահանջները

7.2.1. 311112 - «Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում»

դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտությանը տնտեսագիտության բակալավրի եզրափակիչ պետական

որակավորման աստիճան

որակավորումը

ներառում է ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքը և պետական քննությունը, որոնք թույլ են տալիս բացահայտելու շրջանավարտի տեսական պատրաստությունը մասնագիտական խնդիրների լուծման բնագավառում:

7.2.2. Բակալավրի ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքին ներկայացվող պահանջները.

311112 - «Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում» մասնագիտությանը

դասիչ, մասնագիտության անվանում

տնտեսագիտության բակալավրի ավարտական որակավորման (դիպլոմային) որակավորման աստիճան

աշխատանքն ավարտում մի մշակում է, որը կատարվում է մասնագիտության ուսումնական պլանին համապատասխան և նպատակ ունի համակարգել, ամրապնդել և ընդլայնել շրջանավարտի տեսական և գործնական գիտելիքները ֆինանսների և վարկի, հարկերի և հարկման, ապահովագրման, ֆինանսական մենեջմենթի, բանկային գործի, արժեթղթերի շուկայի, ինչպես նաև հարակից ոլորտներում:

Բովանդակային առումով ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքը պետք է՝

- ներկայացվի որպես բնագավառի հիմնահարցերից մեկին վերաբերող տեսական, վերլուծական, սոցիալ-տնտեսագիտական, փորձարարական հետազոտություն, որում շրջանավարտը բացահայտում է իր տեսական գիտելիքները և գործնական ունակությունները, որոնք թույլ են տալիս իրեն ինքնուրույն լուծելու մասնագիտական բնույթի խնդիրներ,
- ցույց տա շրջանավարտի կողմից գիտական-համակարգչային վերլուծության մեթոդների յուրացման աստիճանը, ունակությունը կատարելու տեսական ընդհանրացումներ և գործնական եզրակացություններ, հիմնավորված առաջարկություններ և երաշխավորություններ բնագավառի հիմնահարցերի լուծման կատարելագործման

- վերաբերյալ,
- կրի ստեղծագործական բնույթ՝ հավաստի վիճակագրական տվյալների օգտագործմամբ,
 - բացահայտի շրջանավարտի պատրաստության աստիճանը ինքնուրույն աշխատելու ՀՀ արդի տնտեսության պայմաններում,
 - համապատասխանի նյութի տրամաբանված և հստակ շարադրման պահանջներին և հենվի հավաստի փաստերի վրա,
 - արտացոլի շրջանավարտի ունակությունը օգտագործել տեղեկատվության որոնման, ընտրության, համակարգման և մշակման արդի մեթոդները, աշխատել բնագավառի նորմատիվա-իրավական ակտերի հետ,
 - ձևավորված լինի հրատարակչական արդի նորմատիվներին և պահանջներին համապատասխան, ունենա հետազոտական աշխատանքի հաշվետվությանը բնորոշ կառուցվածք և 60-70 էջ համակարգչային շարվածքի ծավալ:

Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքների թեմատիկան սահմանում է մասնագիտացնող ամբիոնը: Թեմատիկայում պարտադիր կարգով պետք է ներառվեն ֆինանսների և վարկերի ոլորտի առաջնահերթ ու հրատապ հարցեր, հաշվի առնելով բուհի (ֆակուլտետի) ընտրած մասնագիտացումները և ընտրովի դասընթացների բովանդակությունը ըստ կրթաբլոկների:

7.2.3. Պետական քննությանը ներկայացվող պահանջները.

Եզրափակիչ որակավորման (պետական) քննության բովանդակությունը, անցկացման ձևը և ուսանողների գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է բուհը (ֆակուլտետը) և հաստատվում բուհի գիտական խորհրդում: Նրանում պարտադիր կարգով ներառվում են հարցեր մասնագիտության հետևյալ հիմնական ուսումնական դասընթացներից՝

1-ին համալիր քննություն

- Ագրոպարենային համակարգի ձեռնարկությունների ֆինանսներ
- Դրամաշրջանառություն վարկեր և բանկեր








2-րդ համալիր քննություն

- Ֆինանսական մեներջմենթ
- Բանկային մեներջմենթ
- Արժեթղթերի շուկա և բորսային գործ
- Հաշվապահական հաշվառում

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝

ՀՀ կրթության և գիտության նախարարությանն առընթեր՝ տնտեսագիտական
մասնագիտությունների ուղղությունը

մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող գիտամեթոդական հանձնաժողովի աշխատանքային խումբը

Տնտ. Ֆակ. դեկան, տ.գ.թ., պրոֆ.		Մարգարյան Լ. Ա.
«Ագրոբիզ. կազմ.» ամբ. վարիչ, տ.գ.թ. պրոֆ.		Դավթյան Գ. Վ.
«Ֆին. և վարկ.» ամբ. վարիչ, տ.գ.դ. պրոֆ.		Բալայան Ա. Հ.
«Հ/Հ և աուդիտի» ամբ. վարիչ, տ.գ.թ. դոցենտ		Եղիկյան Ա. Թ.
Հեռ. դեպ. պետ. տ.գ.թ. դոցենտ		Կոսեմյան Է. Ս.
«Ագրոբիզ. կառավ.» ամբ. վարիչ, տ.գ.դ. պրոֆ.		Ղազարյան Է. Ս.
«ԱԱՀ Էկոնոմիկայի» ամբ. վարիչ, տ.գ.թ. դոցենտ		Հակոբյան Լ. Լ.

31112 - «Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում» մասնագիտության
դասիչ, մասնագիտության անվանում

պետական կրթական չափորոշիչը քննարկվել և հաստատվել է տնտեսագիտական
մասնագիտությունների ուղղությունը

մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող գիտամեթոդական հանձնաժողովի 2008թ. հունիսի 4-ի նիստում (արձանագրության թ.14 _):

Հանձնաժողովի նախագահ՝

Հ Պ Ա Հ ռ ե կ տ ո ղ, տ.գ.դ., պրոֆեսոր
պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

Ա. Թարվերդյան
անուն, ազգանուն

« _____ » _____ 200...թ.

Համաձայնեցված է.

ՀՀ ԿԳՆ բարձրագույն և հետբուհական

մասնագիտական կրթության

վարչության պետ՝

_____ պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

Ռ. Գասպարյան
անուն, ազգանուն

« _____ » _____ 200...թ.